ԶՄԻՌՆԻԱՅԻՑ ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱՊՈԼ

ՓՇՐԱՆՔ ՈՒՂԵՒՈՐԻ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Ց. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆԻ

Առաջին անգամը չէր, որ ես Տաճկաստանից դէպի Կովկաս էի ճանապարհորդում։ Սորանից երկու և կէս տարի առաջ ես Եւրոպայից Բալկանեան թերակղզու վերայով հայրենիք վերադարձայ։ Այս անգամ, երբ ես հայրենիք այցելութիւն էի գնում, ամենևին դիտաւորութիւն չ'ունէի ստացած տպաւորութիւններս հրատարակելու, սակայն դարձեալ իմ գրասեղանի առաջ նստելով՝ նրանք շարան-շարան լիշողութեանս մէջ եկան՝ կարծես միմեանց հետ համեմատուել ու չափուել կամենալով։ Միւս կողմից ուղևորութեանս միջոցին ես տեսայ որ իմ տպաւորութիւններիս համեմատական նկարագիրը հետաքրքրութեամբ և մասամբ զարմացմամբ լսում է. ուստի և աւելորդ չը համարեցի ստացածս տպաւորութիւններից մի քանիսը գրի անցնել։

Այս անգամ ուղևորութեանս առաջին կայարանը չը դիտեմ եւրոպական թէ ասիական ասեմ, Զմիւռնիա քաղաքն էր։ Այն անգամ տաճկական քաղաքներից իմ ստացածս տպաւորութիւնները թոռցիկ էին, այս անգամ այնքան հիմնաւոր, որքան հնարաւոր է դպրոցական ասպարիզում գործողին մի տարում այսպիսի մի քաղաքի կեանքն ուսումնասիրել։

Ծովափնեայ դիրքը բաւականին գեղեցիկ է. Զմիւռնիան կարող էր գեղեցկագոյն տպաւորութիւն թողնել ծովից, եթէ նորա լաւ շինութիւնները տափարակի վերայ չը լինէին, մինչդեռ այժմ հեռուից միայն տաճկական թաղերն են, որ աչքի են ընկնում։ Աւելի գեղեցիկ են շրջակայ բլուրների վերայ սփռած արուարձաններն ու գիւղերը, որոնք հետզհետէ տարածւելով՝ միացել են և միանում են բուն քաղաքի հետ։ Այս գիւղերն ընդհանրապէս աւելի գեղեցիկ են, որովհետև նոր ժամանակներում կարողատէր մարդկանց ձեռքով շինուած լինելով՝ եւրոպական կիսաքաղաքների կերպարանք են կրում։ Ինչպէս Եւրոպայի կենտրոններում՝ նոյնպէս էլ

Զմիւռնիայում, Անատոլիայի այս ամենավաճառաշահ քաղաքում, դրամագլուխն հետզհետէ կենտրոնանալով անհատների և ընկերութիւնների ձեռքերում՝ չքաւորութիւնը հետզհետէ տարածւում է հասարակ դասի մէջ, որ քանի գնում՝ աւելի և աւելի ճնշւում է տնտեսական պակաքարի տակ և անկարող լինում նաև իւր սեպհական բնակարանն ունենալու։ Եւրոպական մեծ քաղաքներում բանւորի, մշակի, արհեստաւորի, աշխատաւորի բնակարաններն են մութ և խոնաւ նկուղներն, իսկ Զմիւռնիայում խաներն ու աւերականման տնակները։ Բայց թողնենք դեռ այս խեղճերին։ Այս քաղաքի պարծանքն է հռչակաւոր Քարափը, որ մի սալայատակ փողոց է։ Նորա զարդն է համարեա ծայրէ ի ծայր բազմաթիւ գեղեցիկ սրճարանների շարքը, որ տեղ առ տեղ ընդհատւած է գեղեցիկ տներով ու երբեմն մարմարոնեայ ապարաններով։ Հիանալի է այս քարափը։ երբ նա ամբարլին գիշերները ելեքտրականութեամբ լուսաւորւած է և հիւրընկալում է հազարաւոր լաճախորդների նստոտած կամ շարժուն բազմագոյն խմբերը։ Իսկ երբ բացօդեայ թատերական ներկայացումներ են լինում այս քարափում, մարդս առ ժամանակ մոռանում է որ ժամանակակից Զմիւռնիայումն է, այլ երևակայում է իրան հելլենական աշխարհը տեղափոխւած։ Այս տպաւորութեան տակ դուք չարունակում էք ձեր ճանապարհը դէպի քաղաք, անցնում էք մի քանի գեղեցիկ փողոցներից և յետոյ՝ մնում էք քաղաքի այն մասը, որ ոչ եւրոպական է և ոչ ասիական։ Անցնում էք մի քանի նեղլիկ և ոլորապտոյտ փողոցներ, որոնք սակայն կեղտոտ չեն և երբեմն մինչև անգամ սալայատակ և ահա հասնում էք հինաւուրց «հայնոցը», որ վերջին հրդեհից յետոյ վերանորոգւելով՝ կանոնաւոր քառանկիւնի թաղերի է վերածւել։ Քարափներից և նորա զուգահեռական մի երկուսից յետոյ՝ հայնոցը, կարելի է ասել, յայանի տեղն է բրնում իւր գեղեցկութեամբ, եթէ միայն այս նեղլիկ փողոցներին կարելի լինէր գեղեցիկ բառը վերագրել։ Նրանք այնքան նեղ են, որ երկու կառք դժւարութեամբ են դիմադէմ անցնում, այնպէս որ գեղեցիկ տներն հազիւ կը կարողանային իրանց արժանաւորութիւններն ի ցոյց հանել։ Երևի այս պատճառով է, որ զմիւռնիացին իւր տան արտաքինի վերայ շատ ուշադրութիւն չի դարձնում. նրանք արտաքուստ աւելի քան պարզ են, միակ զարդն է՝ նրանց փոքրիկ պատշգամները (նման պոլսական «ալաններին»), որ մանաւանդ նստակեաց հայուհիների յարմարաւոր դիտանոցներն են։ Այո, այս հայուհիները համեմատելով դրացի այլ կանանց հետ՝ ամենից շատ նստակեացն են և կարծեմ՝ ամենավատառոյները, որի միակ պատճառը չէ այս երևոյթը։ Եթէ ուղևորը մի քիչ միակողմանի դիտող լինէր, նա կը կարծէր թէ Զմիւռնիայի հայ կինն ու օրիորդը միայն նստել ու բամբասել գիտեն, բայց ոչ, այդ շատ խիստ կը լինէր, մենք պիտի տեսնենք, որ նրանք ունին նաև արժանաւորութիւններ ու խօսակցութեան այլ նիւթեր և չը պիտի մոռանանք նրանց հետ չիշել և այլ պակասութիւնները, ի հարկէ

միայն զգուշաւորութեամբ և խնայողութեամբ, որովհետև Պոլսում հրատարակուած ձեռնարկի մէկը գրում է. «երբ ուզէ ոք կանանց վերայ գրել, պարտի ցողոյ մէջ թաթախել իւր գրիչն և եօթներփեան աղեղին գունովք ներկել իւր ոճն» [1)].

Դառնաք կրկին հայոց նկարագրութեանը։ Բնութեանը հակառակ չը գործելու համար՝ առարկաների նկարագրութեանը կցենք նաև շարժական կեանքը։ Նաև ընտանեկան կեանքի պատկերն ալստեղ աւելի երեկոներին է հետաքրքրական։ Դռներից հետաքրքիր ուղևորը ներս է նայում և ինչ է տեսնում. փոխանակ սովորական բակերի՝ ընդարձակ մարմարոնեայ լատակներով սրահներ. սրանք զմիւռնիացու ընդունարաններն են և միանգամայն ամարային նստավայրերը։ Այս ընդունարանի պատերը զարդարուած են գեղեցիկ հայելիներով ու պատկերներով և չորս կողմը կահաւորուած դահաւորակներով, բազկաթոռներով, ծաղիկներով և այլն։ Լաւ տների ընդունարանի յետևից երևում են նաև արևելեան բնութեան լատուկ ճոխ պարտէզներ նոնիներով, նարնջիներով. և ալ տաքդուեայ գեղեցիկ ծառերով, որոնց չատերը մշտադալար են։ Այս տեսարաններն աւելի քան մի այլ բան լիշեցնում են հին հելլենական կեանքը իւր կարգ ու սարքով։ Ասում են մինչև անգամ Աթէնքում ալ ևս չեն տեսնում այն երևոյթները, մինչդեռ այնքան աթենացիք, որոնք չափազանց սիրում են իրանց հին դրականութիւններն ու հնութիւնները, աւելի պէտք է պահպանած լինէին այն չքնաղ սովորութիւնները։ Զմիւռնեայի որ ազգութեան թաղերից ուզում էք անցէք, երեկոյեան ժամանակ, ձեր աչքին ակամայ կ'ընկնեն նրանց բնակիչների ընտանեկան կեանքի բազմաթիւ հետաքրքրաշարժ պատկերները. միայն բացառութիւն են կազմում տաճիկները, որոնց տները արդէն հեշտութեամբ կարելի է ճանաչել պատուհանների խիտ փայտեայ վանդակներից, որոնք, ընդհակառակը, միայն ներսից դուրս տեսնելն են թոյլ տալի։ Քրիստոնեայ ազգութիւնների և հրէաների բակերում (ընդունարաններում) դուք կը տեսնեք ամբողջ ընտանիքը նստոտած եւրոպական ճաշակի աթոռների, բազկաթոռների վերայ, որոնց չատը նաև օրօրելու համար են շինած։ Եւ, ճշմարիտ, այս մարդիկը, ընթերցանութեան չատ գլուխ չունենալով, այնքան օրօրում ու խօսում են, մինչև որ կը թմրին ու քնանալու կ'երթան։ Ինչպէս երևում է, գրել-կարդալը թէ հայերի և թէ օտար ազգերի մէջ աւելի քան մի այլ տաճկական քաղաքում տարածուած է, սակայն սրանց ուսումնարաններն ու կեանքը մեծ մասամբ վիպասէր և լրագրասէր սերունդ են պատրաստում։ Սակայն չը մոռանանք որ այս քաղաքում եղել են և կան լաւ ճաշակի տէր զարգացած անձնաւորութիւններ, որոնք պահպանել են լրագրութիւն և բազմաթիւ թարգմա-

---

[1)] Եւ գէտե՞ն ընթերցող, որքան այսպիսի գանձեր են պարունակում այդ մանկավարժների գասագրքերը... Ց. Տ.-Մ.

նութիւններ արել։ Ափսոս որ վերջիններս միայն վիպասանական գրականութիւնն են սեսել և երբեմն բաներ թարգմանել որ աւելորդ են։ Զմիւռնիացի հայը առանձին հաճութեամբ է կարդում նաև կուսակցական գրուածքները, որոնց ոչ տպողն է հաւատում և ոչ ընթերցողը։ Այս քաղաքներում ոչ միայն բարձր կրթութիւն ստացած հայ կանայք և օրիորդներ չը կան, այլ և երիտասարդները հազագիւտ են։ Միայն երևում են մի շանի իրաւաբաններ ու բժիշկներ Պոլսում կամ Պարիզում ուսած։ Այն գիտութիւնները, որոնք անմիջական կապ չ'ունին վաճառականութեան հետ, համարեա թէ անմիտ բաներ են երևում Զմիւռնիայի հային։ Երբ երբեմն պատմում եմ, որ մենք ոչ միայն բազմաթիւ ու բաղմապիսի ուսանողներ ունենք, այլ և ուսանողուհիներ, սարաֆի զարմացմանը չափ չէ լինում. «մթթէ հնարաւոր է, որ օրիորդմը օտար աշխարհ երթալ առանց ծնողաց»։ Այո, գնացել են և գնում են աւելի ու աւելի, որովհետև ծնողներն ու ընտանիքները նրանց առհասարակ սուրբ և ազնիւ հայրենիք վերադարձած են տեսնում։ Բայց զգուշանանք չափազանցութիւններից, որպէսզի միակողմանի գաղափար չը տանք մեր կովկասեցի հայ օրիորդների մասին։ Այդպիսի աստիճանների հասնում են իսկապէս համեմատաբար քչերը, թէև բարձր կրթութեան ձգտողները բազմաթիւ են։ Հայկական ուսումնարաններում տարիներ առաջ, երբ հայ վարժարաններն աւելի զարգացած էին սաներն էլ ընթերցասէր և առհասարակ ազնիւ ճաշակ ունէին, թէև շատերն էլ մոռանում էին թէ ուսում և թէ ընթերցանութիւն։ Այժմ երևացող օրիորդներն ռուսաց ուսումնարաններում են, որոնց քչերը քիչ թէ շատ կանոնաւոր հայերէն գիտեն։ Զմիւռնիացիք ընդհանրապէս խօսում են հայերէն որ շատ գնահատելի է, մանաւանդ որ հայերն այստեղի ազգաբնակութեան շատ աննշան մասն են կազմում, մինչդեռ պոլսեցիք շատ անգամ հեռու չեն օտարախօսութիւնից։ Զմիւռնիայի հայերէն շատերը, որոնք նորաձևութեան այնքան հետամուտ են, այլ լեզու չէ, այլ ֆրանսերէն կարծեմ կը խօսէին, եթէ երես հանելու չափ գիտենային։ Խօսքը պատահմամբ օրիորդաց վերայ բացուեց. լեզուի վերաբերմամբ երկու կողմի այս մարդիկն էլ նոյն դիրքն են բռնած, միայն կովկասեան և նոյն իսկ Թիֆլիսի այդ մարդիկ աւելի աւելի բռնող են մայրենի լեզուի և այս կողմից աւելի աչքի են ընկնում և իրանց տիկիններից ու ազջիկներից շատ տարբերուում, վասն զի հակառակ հայ կնոջ սովորութեան՝ սրանք սիրում են մի երկու լեզուով կոտրատել, եթէ մինչև անգամ մէկի կամ միւսի մէջ վարժ էլ չը լինէին։ Գալով Զմիւռնիացիների բարբառին, երբ խօսում են իրանց թրքախառն լեզուով՝ ինձ լիշեցնում են մեր այլ հեռաւոր ազգակիցները, նոր նախիջևանցիները, թէև զմիւռնեացիների լեզուն աւելի պարզ ու մաքուր է [1]։

---

[1] Բերենք այստեղ մի քանի օրինակներ, որոնք առհասարակ լսում ենք։ Աւելի աչքի են ընկնում ազգականութեան վերաբերեալ տանկերէն խօսքերը։ Այս օրի

Դեղարուեստներից միայն դաշնամուրն է, որ գրաւել է նաև մեր զմիւռնիացիների համարեա բացառապէս միայն զստերց ուշադրութիւնը, վասն զի հիմա աշխարհումս ամենուրեք դաշնամուր ածել օրիորդին ամենաընտիր փայլ տուող զարդերից մէկն է. համաճարակ հիւանդութիւն կամ նորաձեւութիւն՝ ինչ ուզումէք ասացէք, երկուսն էլ ընդունելի է, ընդունակութիւն կամ նիւթական՝ կարողութիւն կալ թէ չը կալ, միեւոյնն է, պէտք է ածել...

Ինչ վերաբերում է երգեցողութեանը, այդ հօ 'ի սկզբանէ անտի աւելորդ բան է համարուած նաև մեր երկսեռ վարժարանների համար. այսպիսի հանգամանքներում աւելորդ է ասել, որ անհնարին է կովկասեան օրիորդների և երիտասարդների պէս մասնագէտ երգիչներ ունենալ, որոնք աւելի և աւելի գրաւում են եւրոպական երգեցողութեան արուեստագէտների ուշադրութիւնը։ Այս գեղարուեստի յառաջադիմութեանը Կովկասում աւելի նպաստամատոյց են եղել տեղական հանգամանքները. բոլոր հայ ուսումնարաններում ձայնագրական երգեցողութիւնը պարտադիր սահմանելուց յետոյ՝ աւելի աչքի ընկան մեր երգիչները, որոնք միւս կողմից աւելի դիւրութիւն ունէին Ռուսական մայրաքաղաքներում ուսանելու և Եւրոպայում կատարելագործուելու։

Նաև թատերական գործը բացակայ է Զմիւռնիայի հայերի կեանքից. 'ի հարկէ խօսքը մշտական բեմի մասին չէ, դի այս գաղթական հայերն այնքան սակաւաթիւ են (8000), որ անհնարին էր այդպէս բան սպասելը։ Այստեղ եղել է մի օպէրայի թատրոն, ուր գլխաւորապէս ֆրանսերէն են եղել ներկայացումները. այրուելուց յետոյ այս բաղմաբարբառ հասարակութեան մէջ այլ ևս համաձայնութիւն չէ եղել նորը կառուցանելու։ Բայց մենք օտար լինելով՝ կարող էինք մտածել որ այս գաղթական հայերը, որոնք արտաքուստ եւրոպական ճաշակով են ապրում, անշուշտ պէտք է ունենան իրանց թատերասիրաց խումբը. օ՜հ, այդ ինչ էք ասում, կը պատասխանեն մեզ զարմացած զմիւռնիացիք, միթէ այդ մտածելու բան է, որ հայ երիտասարդն օրիորդի հետ բեմ ելնեն և ներկայացնեն։ Եւ իրաւի, եթէ մի օրիորդ այս քաջութիւն անէր, այնուհետ յաւիտեանս պէտք է են-

---

նակների բառերից շատերի հայերէնը, է հարկէ, գիտեն, բայց չեն գործածում։ «Ղուզեին սիրթն աղուր եօջսա կէյէլեն»։ «Վերին մէկ թարաֆը արևսըզ է»։ Հայէ տիվէնները տունականները։ «Ինչ տո՞ր է, ուխտլի՞ էք։ «Աղկէկ դաւուններ ու զարփուզներ»։ Իմ տայեն (մօրեղբայր) պալաէզին (քեռի) տեյզեն (մօրաքրոջ որդի)։ ամճայիս (հօրեղբայր), հալան (հօրաքոյր)։

[1]) Բայց ի՞նչ են այս տեսակները, համեմատելով այն քարոզի հետ որ ես լսեցի Երկու օրս Մանիսայում պատարագիչ քահանայի բերանից, որ սուրբ խաչի տօնի առթիւ խօսեց. դիակ «Սուրբ խաչն խորթուսի մի—բերարակ օլսուն»։ Սրթասի դիւն հասասախանէյրն հանդերձ օլաճակ, մինչդեռ ինչպէս տեղեկացայ մանիսացիք լաւ հայախօսեն։

թարկուէր հասարակաց կարծեաց կամ աւելի ուղիղ է ասել՝ անվերջ բամբասանքներին։ Երկար ժամանակ այս հայ գաղթականների կեանքը չփուլով օտար տարրերի հետ՝ մեզ բոլորովին անհասկանալի երևոյթներ է ներկայացնում։ Երբ մի կողմից տեսնում ես սրանց պարահանդէսներն ու դիմակահանդէսները եւրոպական վերջին կատարելագործութեամբ և պարագաներով, միւս կողմից այն անբացատրելի դիրքը դէպի բեմը, եթէ օտար ես՝ ապշած կը մնաս։ Զը նայելով, որ ինչպէս ասում են և երևում է, հայերը, բարոյական տեսակէտից, բոլոր տեղական ազդութիւններից բարձր են, (բացի տաճիկներից, որոնց ընտանեկան կեանքն այլ պայմաններ ունի), այնուամենայնիւ նոյն իսկ հայ երիտասարդների խօսքով կան ոչ սակաւ դատապարտելի և անվստահելի անձնաւորութիւններ։ Թէև այս կողմերը թատերական գործ չը կայ, այնուամենայնիւ դպրոցական ներկայացումների 9—10 ամեայ փոքրիկ դերասաններն ու դերասանուհները հիացնում են մարդու, մանաւանդ վերջիններին, որոնք կարծես մի մի փոքրադիր Աստղիկներ, Սիրանուշներ ու Գարաշներ են. ես ոչ Կովկասում, ոչ Ռուսաստանում և ոչ Գերմանիայում եմ տեսել այսպիսի բան. նոյն իսկ մանկական պարտէզում այնպիսի մանկիկներ կան, որոնց բնական բաղմակողմանի ընդունակութիւնների մասին գաղափար տալու համար՝ հարկաւոր էր ամբողջ թատերական քննադատութիւններ գրել, որ նոյն իսկ հոգեբանական տեսակէտից վերին աստիճանի հետաքրքրաշարժ կարող էր լինել։ Որքան մեծ էր լինէր թատերասիրաց խմբի աջողութիւնը այս քաղաքում, որի թէ բարոյական ազդեցութիւնը և թէ նիւթականը շատ կարևոր են։ Մի այսպիսի քաղաքում անհրաժեշտ է գաղափարի համար կուռող կովկասեցի հայուհին։

Եթէ զմիւռնիացի հայերը թատրոն չ'ունին, սորա փոխարէն նոքա ի վաղուց անտի ունին բազմաթիւ բարեգործական և կրթական ընկերութիւններ, թէ կանանց և թէ արանց, ընկերութիւններ, որոնք ոչ թէ մեր Կովկասեան շատ ընկերութիւնների պէս՝ անունով գոյութիւն ունին. նրանք գործում են բաւականին և արդիւնք են ցոյց տալիս։ Հասարակական կեանքում չը կայ համարեա կարիք, որի համար դատ ընկերութիւն կազմուած չը լինէր. հիւանդանոց, չքաւորներին դեղ բաժանող և բժիշկ հասուցանող ընկերութիւն, հոգատար ընկերութիւն կանանց (չքաւոր աշակերտուհիներին խնամող), կրթասէր ընկերութիւն՝ օրիորդների մանկական պարտէզ ղեկաւարող, ընկերութիւններ չքաւոր տղաներ և աղջիկներ մանկական պարտէզում որդեգրող, ընթերցատուն, ընթերցասիրաց ընկերութիւն և այլն։

Գալով Զմիւռնիայի հայոց պարապմունքներին՝ նրանք դլխաւորապէս վաճառական են, այսինքն՝ այս կողմից են աւելի աչքի ընկնում. կան և ոչ սակաւ արհեստաւորներ, սակայն սրանից վար պարապմունքներից այստեղի հայը խոյս է տալիս. դժուարին և ստորնակարգ պարապմունքների մէջ

տեսնում ես աւելի հրէաներին, լոյներին և տաճիկներին։ Զարմանալի է, որ հրէաները Եւրոպայում և այլ երկիրներում աւելի հեշտ միջոցներ են գտել ապրելու, իսկ իրանց հայրենիքին մօտ երկիրներում բաղմաթիւ ոտաքոքիկ շրջողներ ունին, որոնք չեն խորշում խոդանակները ձեռքերին փողոցէ փողոց վազ տալ, սրա նրա առաջը ծունր դնել՝ կօշիկներ սրբելու և տաս փարայ վաստակելու համար։ Ինչպէս երևում է, այդ աշխարհահռչակ խրամանկ ժողովրդին դժուար է հայերի և լոյների մօտ դաս առած եւրոպացիների և այդ երկու ազգութիւնների հետ մրցելը։ Թէև Զմիւռնիայում նաև այլ ազգութիւններ մեծ դրամատէրեր ունին, սակայն հայերը իրանց փոքրաթուութեանը նայելով՝ առաջինն են, որ հինգ հատ ½—1 միլիոն ոսկի համարող ներկայացուցիչներ ունին։ Կան և շատ «միջակ» հարուստներ, որոնք Կովկասում գլխաւորի անունը կարող էին կրել։ Վերջին շրջաններում, որքան պոլսի հայ դրամատէրերը տեղի տուին լոյներին, այնքան զմիւռնիացի հայերն առաջացան։ Այս կողմից, ինչպէս երևում է, տեղացի լոյներն առանց նախանձի չեն կարող նայել հայերի վերայ։ Իրողութիւնն այն է, որ այս քաղաքի հայը կամ վերին աստիճանի հարուստ է կամ բոլորովին քաղցած. ի հարկէ կան նաև բաղմաթիւ միջին վիճակի ընտանիքներ, սակայն այդ երկու ծայրայեղութիւններն աստ առաւել քան ո և է մի այլ տեղ աչքի է ընկնում, դի այս գաղթական հայերի չքաւորը չափազանց վիհանձն է. նա աւելի շուտ կը համաձայնի քաղցած մնալ, քան ստորնակարդ զբաղմունք ունենալ։ Խօսելով այս կարգի մարդկանց վերայ, չը մոռանանք պատմական «Մորթաքի» կոչուած խանը, ուր հաւաքուած են բաղմաթիւ աղքատ հայ ընտանիքներ ու անհատներ, որոնց ուրկից դալն ու ինչ անելն Աստուած դիտէ։ Այլ մարդ է Հայաստանից եկած մշակը, որի ճակատագիրն է ամենուրեք աշխատութեան ամենածանրը՝ արիւն քրտինք մտնիլը, կարծես հայ մշակի համար ստեղծուած լինէր այս խօսքը թէ՝ «քրտամբք երեսաց քոց կերիցես ղհաց քո»։

Պոլսեցիների հետ համեմատելով՝ ասում են որ զմիւռնիացիք ընդհանրապէս աւելի ծանրաբարոյ են, բայց և քիչ ոգևորուող։ Ես անձամբ պոլսեցիներից գեռ շատ քչերի հետ մօտ ծանօթանալու և գործ ունենալու դէպք եմ ունեցել, ուստի չեմ կարող այս մասին մի դրական կարծիք յայտնել, սակայն կովկասական և եւրոպական կեանք վարած մարդու համար՝ ընդհանրապէս Զմիւռնիայի կեանքը շատ պաղ կը դալ, վասն զի նրանց կեանքը ոչ այս է և ոչ այն։ Հայկական կեանքի նիստ ու կացի և շնորհալի յարաբերութիւնների սովորութիւնները կապկապած են եւրոպական կեղծ «էթիքէտներով», իսկ եւրոպականները ասիական սովորութիւններով (ադէթներով) և բամբասանքներով։ Այս մասին «հասարակաց կարծեաց» վերին աստիճանի անսպասելի և ծաղրալի հակասութիւններ կան թէ հանդէսներում երկսեռ հանդիսականների նստելու եղանակի վերաբերմամբ, փողոցում բարև տալու, սերենադների և այլն և այլն մասին։ Ամեն

բան չափչփած, իւրաքանչիւր քայլ կապկապած է այս հայերի կեանքում։ Ինչպէս իւրաքանչիւր երիտասարդ, ինչպէս և այս ունի ի հարկէ իւր բացատրութիւնները. ընտանեկան նուիրական սրբութիւնների պահպանողական հայը, շրջապատուած լինելով օտար տարրերով՝ դարերի ընթացքում կազմակերպել է մի կեանքի եղանակ, որ պէտք է մրցել կարե-նար թէ եւրոպական և թէ յունական աղդեցութիւնների հետ, բայց և այնպէս պէտք է տեսնէին այն համեստ ընտանիքները, որ այդ ամրոցի պարիսպներն արդէն տեղ տեղ ալքան թուլացել են, որ ներս են թողնում «թշնամիներին»։ Երբ հայը իւր ընտանեկան պարիսների մէջ «թշնամուն» տեսաւ, այն ժամանակ սարսափահար եղաւ և լառաջացան վերոյիշեալ բազմապիսի հակասական կապերը։ Սակայն շատ ուրախալի է, որ այս մի բուռն հայ գաղթականութեան մեծամասնութիւնը պահպանել է ընտանեկան կեանքի հայկական տիպարը։

Այլ են Կովկասեան հայերի հասարակական և ընտանեկան կեանքի զարդացման աստիճանները։ Այնտեղ հայերը կենտրոններ կազմելով՝ ոչ թէ յուսահատական, այլ բնական կռիւ են մղում եւրոպական կեանքի սովորութիւնների դէմ։ Թէև մի որ և է դաւառական քաղաք Կովկասում ընդհանրապէս աւելի չէ կամ քիչ է զարդացած Զմիւռնիայի հայերից, սակայն այնտեղ կեանքն այնպէս կապկապած չէ, հայ պատուաւոր օրիորդն ու կինը համարձակում է, երբ բեմական սուրբ դործը պահանջում է, մինչև անգամ թափառաշրջիկ դերասանների հետ թատերական բեմ ելնել (լսեցէք ով զմիւռնիացիք)։ Ինչու, որովհետև հասարակութիւնը վստահ է։ Այնտեղ հայ օրիորդը կարող է երիտասարդին ոչ միայն ազատ բարևել՝ այլ և միասին նստել, շրջել հասարակական զբօսավայրերում...։ Ինչ արժէ Կովկասեցու այն պատուական «քէֆը», որի մասին զմիւռնիացին ոչ միայն գաղափար չունի, այլ և երազել չէ կարող, քանի որ սրանց հարսանիքներն անգամ ընդհանրապէս մի մի հասարակ ալցելութեան («վիզիթ օրի») ձև ունին։ (պարահանդէսը վերապահած է միայն ամենածանր հարուստներին)։ Ինչ արժեն այն հիանալի Կովկասեան քէֆերը, որոնք լինում են ընտանեկան, ընկերական կամ հասարակական ուրախութիւնների առթիւ. քանի քանի սառնացած սրտեր աստ տաքանում են, քանի քանի գոցւած սրտեր բացւում, որքան քենացած կամ խռոված զդացմունքներ դիւթական բաժակի հնչումով մեռնում։ Իսկ այն մեղմ ու հանդարտ և երբեմն որոտընտոստ պարերը, այն ժողովրդական պարերգերը, երգերը, տաղերը, որոնք հայի ընտանեկան կեանքի բոլոր պատկերները մարդուս աչքի առաջն են բերում և հիացնում նաև եւրոպացիներին, ուր պէտք է գտնել։ Մինչև անգամ ռուսներն ու վրացիները չեն կարող անտարբերութեամբ վերաբերել մեր հայկական պարերին, այս չքնաղ ու խորհրդաւոր զարմանքեանը նրանցից շատերն առանձին իմն հաճութեամբ են մասնակցում։

Զարմանալի է մարդկային բնաւորութիւնը. որքան հեռու՝ այնքան

սիրելի են դառնում նրան առարկաներ ու անձնաւորութիւններ։ Ինչպէս միշտ, այնպէս էլ վերջին ուղեորութեան ժամանակ ես Կովկասում տրամադիր էի շատ անգամ զմիւռնիացիների որոշ արժանաւորութիւնները նկարագրելով՝ մեր Կովկասեցիներից աւելի բարձր դասել և Զմիւռնիայում Կովկասեցիների վերաբերմամբ մինչև դիրքը բռնել։ Այժմ, երբ այս տողերը գրում եմ, իւրաքանչիւր քայլափոխում կանգ եմ առնում և քննադատում գրածներս, որպէսզի իմ ընթերցողներին թիւր և միակողմանի գաղափար չը տամ՝ մեր գաղթական և բնիկ հայրենակիցների հետ համեմատելով։ Ու ահա տեսնում եմ, որ խօսելով Զմիւռնիայի երիտասարդների մասին, մոռացել եմ ասել, որ նրանց մէջ կան լուրջ և մտածող խումբեր, որոնք թէ նիւթական և թէ մտաւոր ոյժեր են ներկայացնում։ Այս երիտասարդներից աւելի ծանրակշիռներն աւելի հասակաւորների հետ ընտրել են ազգային այլ և այլ վարչութիւնների անդամներ և որքան իրանց պատրաստութիւնը ներել է։

Վերջին տարիները կուսակցական ոգին բաժանել է այս գործող ոյժերը և այս բաժանումն այնքան չափազանց է, որ մինչև անգամ ազդեցութիւն է ունենում ընտանեկան յարաբերութիւնների վերայ։ Ինչ այս քաղաքում փոքր դիրքով է պատահում, այն Մանիսայում ծայրայեղութեան է հասնում։ Մի պաշտօնական անձնաւորութիւն, որ գնացել էր երկու կուսակցութիւններին հաշտեցնելու դիտաւորութեամբ, պատմում էր, որ մանիսացիք զանգատւում էին, թէ այդ ոգին այնքան է տարածւել ընտանիքների մէջ, որ նոյն իսկ կնոջ և մարդու մէջ սառնութեան պատճառ է եղած։

Զմիւռնիացոց կենսական երևոյթների նկարագիրը շատ թերի կը մնայ, եթէ չը լիշեմ այստեղ, որ այս քաղաքում մինչդեռ յունական և այլ թաղերը մանուկներով լեցուն են, հայկական փողոցները կարծես աւերակ են. ինչու, որովհետև քեզ կը պատասխանէ երիտասարդը՝ մեր օրիորդները առաւել քան այլ դրացիները շուայլ են. բացի սրանից մեր կեանքն և այլ պահանջներ ունենալով՝ ընտանեկան վիճակը շատ ծանրացել է. 35—45 տարեկան երկսեռ ամուսնացողները բացառութիւն կազմողները չեն։ Բայց կան նաև բաղմաթիւ ամուրի երիտասարդներ, որոնք լաւ ապահովուած են։ Եթէ գաւառներից անդադար հոսանք չը գար, հայ գաղթականութիւնն այստեղ շուտ կը վերջանար։ Չը խօսելով վերոյիշեալ հանգամանքներից առաջացած զանազան ծանրակշիռ հետևանքների մասին, լիշենք միայն, որ այս գաղթական հայերը, այսպէս սակաւանալով, այսօր, յունական նշանաւոր մարդաբնակութեան առաջ, 8000 ողորմելի թիւն են ներկայացնում։ Ո՞վ կը հաւատայ, մինչդեռ հեռու տեղեր Զմիւռնիայից այնպէս ձայն է դալիս, ասում են ինձ շատեր, որ կարծես թէ 150,000 հայ պարունակող հայկական քաղաք լինէր։

Նորաձևութեան անագորոյն ճնշումն զգում է այս քաղաքի խեղճ օրիորդը նոյն իսկ մանկական հասակից եկեղեցի գնալու, դպրոցական

հանդէսների և նոյն իսկ դպրոցական զբոսանքների ժամանակ։ Եթէ փոքրիկ աշակերտուհին վերջին նորաձեւութեան գոնէ մօտեցող զգեստ չ'ունենայ, «անոր մէրը չ'ուզեր խրկել»։ Եւ ալպպիսի մայրեր այնքան շատ են տարաբաղդաբար, որ նրանց հակատիպարներն հազագիւտ բացառութիւններ են։ Եթէ դպրոցը, կամենալով ծանրաբեռնած ընտանիքների տնտեսական ծանր վիճակը որքան և իցէ թեթեւացնել՝ կանոնաւոր կար ու ձեւի մասնագէտ վարժուհի է հրաւիրում և կարող՝ ընտանիքներից ամենաչնչին թոշակը պահանջում, սրանցից շատ քչերն են հաճութիւն յայտնում և սրանց միջից էլ շատերը կիսասիրտ։ Կամ չնչին փողն են խնայում և կամ կարևորութիւն չեն տալիս, մինչդեռ շուայլութեան ծառայող և շլացուցիչ ծաղկակար ձեռագործների համար ոչ մետաքս, ոչ կերպաս և ոչ թաւիշ է պակասում։ Եւ ահա կանգնած ենք ուսումնարանի դրանը, մի հիմնարկութեան մուտքի մօտ, որն անցնելով՝ մենք կարող ենք տեսնել այս քաղաքի մատաղ սերունդը, որի կեանքը կարող է ժողովրդական կեանքի երևոյթներից շատերը մեզ բացատրել և վերջիններս փոխադարձաբար ուսումնարանական կեանքի ինչ ինչ երևոյթները։

Մենք ցայդ խօսեցանք այս մեր հայրենակիցների զործունէութեան այլ և այլ ճիւղերի մասին և կարծես մոռացել էինք սրանց վարժարաններն ու հիւանդանոցը, որ իրանց թէ վարչական մարմինների և թէ հասարակական գործունէութեան ամենագլխաւոր վայրերն են։ Հիւանդանոցի մասին կարող եմ ասել, որ նորա շինութիւնը իւր գեղեցիկ պարտէզով ու այլ յարմարութիւններով կարող էր, չնորհիւ հանգուցեալ Յակոբ ու Յովհաննէս Սպարթալեանցների, շատ քաղաքների հիւանդանոցներին նախանձելի լինել, սակայն եթէ ազգային սնգուկը տակաւին պարտքի տակ չը լինէր, մատակարարութիւնը կարող էր աւելի լաւ լինել, որ առ այժմ միայն գոհացուցիչ վիճակի մէջ է։ Տղայոց Մեսրոպեան վարժարանը, որ Կովկասում Սպարթալեան անունով է յայտնի, կարող էր իւր չքեղութեամբ և յարմարութիւններով նաև եւրոպական նոյնանման հիմնարկութիւնների մէջ հազագիւտ համարուել։ Նոյնը մօտաւորապէս կարելի է ասել նաև Հռիփսիմեան վարժարանի մասին. սակայն՝ ինչ վերաբերում է այս հիմնարկութիւնների ներքին կեանքին՝ նա ոչ արտաքինին է համապատասխանել և ոչ էլ հայկական և տեղական կեանքի ծանր պահանջներին։ Թող առժամանակ այսքանովս բաւականանայ իմ հարցասէր ընթերցողը, որովհետև եթէ մենք մի քայլ էլ յառաջ գնալինք և սկսենք քրքրել այս փափուկ խնդիրը, այն ժամանակ հարկադրուած պէտք է լինէինք իւրաքանչիւր քննադատելի երևոյթի վերաբերեալ փաստերը նոյնպէս մէջ բերել, որ մեզ այստեղ շատ հեռուն կը տանէր։

Այս երկրի նաև ուսումնարանական կեանքում իւրաքանչիւր քայլափոխում տարօրինակ երևոյթներ ենք տեսնում և այն ոչ միայն հայ ժողովրդի մէջ, այլ և յունաց և մինչև անգամ եւրոպացոց։ Մեր

այս ազգալինների ուսումնարանական գործն առհասարակ շատ բաներով լետ է մնացել իրանց դրացիների լառաջդիմութիւնից։ Տաճկահայերի ուսումնարանական գործն ընդհանրապէս խանձարուրի մէջ է դտնւում թէ եւրոպական և թէ ասիական մասերում. մինչդեռ այս երկրի ծանր պայմանները կրկնապատիկ մանկավարժական հմտութիւն են պահանջում՝ եկեղեցական, բարոյական, տնտեսական ոյժերը պահպանելու համար։ Մինչդեռ սրանց սահմանադրական վարչութիւնն ունի իրաւունքներ և ձեւեր, որոնք շատ նպաստաւոր կարող էին լինել ուսումնարանական գործին։ Բայց ես արդէն դուրս եմ գալիս Զմիւռնիայի սահմաններից և ժամանակ է, վասն զի դեռ ուղեորութեանս առաջին կայարանի վերայ եմ մնացել՝ միայն մերթ ընդ մերթ ընթերցողիս երևակայութիւնն այս ու այն կողմ թռցնելով։ Տաճկահայերի ուսումնարանական գործը սրանց կեանքի ամենաշահագրգիռ երևոյթներից մինն է, որի նկարագրութիւնը սակայն կարօտում է մի շարք ժողովրդական ոգուով կազմած լօգուածների հանդերձ քննադատութեամբ, որ ամենից առաջ կարևոր է Պոլսի թերթերից մէկում հրատարակել։ Գալով Զմիւռնիային՝ սորա մասին մեր ասելիքները պակաս չեն թէ ուսումնարանական և թէ այլ երևոյթների մասին։ Այստեղ ես իմ ուշադրութիւնը գլխաւորապէս կենտրոնացրի հայերի համարեա լոկ բարոյական-մտաւոր կեանքի վերայ, բայց ես լոյս ունիմ, որ «Մուրճ»-ի մօտակայ համարներից մէկում պիտի կարենամ մանրամասն նկարագրել այս Այտընի նահանգի, Օսմանեան պետութեան թագը կազմող այս գեղեցիկ ու արդիւնաւէտ երկրի բազմալեզու ժողովուրդների տնտեսական կեանքը և սրան լարակից մտաւոր ու բարոյական երևոյթները։

Զմիւռնիայի օդը թէ իսկական և թէ փոխաբերական մտքով առած՝ շատ հեղձուցիչ է, նամանաւանդ ամառուայ օրերին, ուստի երկիւղ եմ կրում, որ իմ Կովկասեան հայրենակից ընթերցողներին, որոնք լեռնային հովաշունչ մթնոլորտի են սովոր՝ այս կայարանում երկար պահելով՝ տաղտուկ չը զգային։ Օ՛ն ուրեմն ելնենք սիրելի և ազատ ծովը, որ մի ակընթարթում իւր անմահական շնչով փարատում է ամեն ցաւ։ Մենք արդէն Պլուտոնի թագաւորութեան մէջն ենք, նորա սիրասուն զաւակներից կանաչակապոյտ բազմակղզի հնազարեան Եդէլեան ծովն է մեզ հիւրընկալողը։ Ո՛հ, ինչ թեթև է զգում մարդս իրան երբ շրջապատած է նա միայն ծովով ու ծովով, մանաւանդ երբ նա հելլենական խորհրդաւոր կեանքի այս չքնաղ որրանում, մոռանալով ներկան ու ապագան՝ մանկական լափշտակութեամբ ենթատուր է լինում այն անցեալ սիրելի դիւցազնական արկածների վիշտակներին։ Կղզիներ են, որ աջ և ձախ սոնկերի նման կարծես լուսել են ծովի հարթ մակերևոյթի վերայ. քարտէզների վերայ նշանակած բազմաթիւ կէտերն չանկարծ պատկառելի լեռնաշղթաներով կղզիներ են ներկայանում։ Բայց որքան էլ գրաւիչ լինէր այս ամենը, մօտակայ Տրովադան իւր պարիսպներով և միջի ու դրսի հերոսներով հմայել են արդէն

քո ամբողջ երեակայութիւնը։ Մի քանի ժամ ևս՝ և այնտեղ Դարդանելի դրան աջակողմեան թեի վերայ հեռու հեռու ամպերի տակ ցոյց են տալիս ձեզ այն քաղաքի տեղը, ուր պատերազմում էին ամբողջ մարդկութեան սիրելի տիտանները։ Ես երկիւղ էի կրում մտնենալ այն դիւցազների քաղաքին. թող, թող նա այն հեռաւոր ամպերի տակ լռելեայն պահպանէ իւր խորհրդաւոր էութիւնը, որպէսզի չ'նսեմանան իմ երեակայութեան մէջ այն սիրելի պատկերները։ Երբ ես սթափեցայ, ինձ կրկին չարժական միջադդային կղզու վերայ տեսայ։

Այս անդամ Ֆրանսիական Մեսաժերի ընկերութեան պատուական շոգենաւն էր այդկղզին, ուրեմն ես ինձ Ֆրանսիական աշխարհում պէտք է զգալի։ Այս անգամ Զմիւռնիայից մինչև Բաթում գնալ գալիս չորս ազգութիւնների շոգենաւերի հանդիպեցի՝ Ֆրանսիական, աւստրիական, անգլիական և իտալական, որոնց իւրաքանչիւրն իւր աղգային յատուկ պատկերն էր ներկայացնում։ Յարդ ինձ չէր աջողւել անգլիական շոգենաւով ճանապարհորդելու, զի այս կողմերը այդպիսի մարդկիր շոգենաւեր չը կան։ Այս անգամ մեր հարեանակից Աղեքսանդր Մանթաշևանի շոգենաւերից մէկն էր, որ, իբր բացառութիւն, հիւրասիրեց ինձ։ Մանթաշևանի քարիւղի (նաւթ) գործը մի չերկրական և Սև ծովերի վերայ յառաջադիմական մեծ քայլեր է անում։ Դեռ անցեալ տարի մի փոքրիկ սեպհական շոգենաւ ունէր, իսկ այժմ նաև մի մեծ «Իրանվիլ» շոգենաւ գնեց, որի մէջ Բաթումից ես միակ ճանապարհորդն էի։ Այս քարիւղի գործերի մասին ես աւելի մանրամասն կը խօսեմ իմ հետևեալ յօդուածում, որ վերաբերելու է այս երկրի աւելի տընտեսական կեանքին։ Առայժմս միայն, որ մեր վերոյիշեալ հարեանակիցը, չնորհիւ իւր ոյժին և ապրանքի արժանութեանը, այս կողմերը մի միակ մենաշնորհ (մոնոպոլ) է ձեռք բերել, որովհետև երբ մի ապ մրցակից ապրանք է բերում, Մանթաշևանի գործակալներն յանկարծ այնպէս իջեցնում են քարիւղի դինը, որ նորեկը ջնասով վաճառում ու լետ է քաշւում։ Սակայն այն տարի ռուսական արժէթղթերի անակընկալ և սաստիկ բարձրանալը համարեա հողի հաւասարեցրուց ոսկին և, ի թիւս ալլոց, նաև Մանթաշևանին մեծ ջնասներ հասցրեց։ Այս շոգենաւի գլխաւոր պաշտօնաները՝ գլխաւոր նաւապետն ու օգնականը, գլխաւոր մեքենապետն ու օգնականը անգլիացիներ էին, իսկ միւսները համարեա՝ ամենն ազգութիւններից, սկսած Բրիտանիայի հպարտ զաւակներից մինչև սեամորթ խափշիկները. բայց բոլորն էլ իրանց գործում անգլիացիներ էին։ Այս նաւի վերայ առժամանակ ծառայում էր մի դարգացած ռուս պատանի, որ ինձ ցոյց տուեց նաւապետի օգնականին՝ ինչ էք կարծում սա ով է. ես պատասխանեցի «նաւաստի», մինչդեռ դուրս եկաւ բոլորովին հակառակը, ինչու, որովհետև այդ մարդը նաւի վերայ ամեն աշխատանք անում էր նաւաստիների հետ՝ փոխանակ կանգնելու և ալլոց պէս հրամայելու։ Նաւապետը մի պատկառելի ծերունի էր, որի մասին կարելի էր ասել՝ ծովի վերայ ծնել և այն-

տեղ էլ մեռնելու է։ Մեր ծերունի մոտրին ես գլխաւորապէս հաց ուտելու ժամանակ էի տեսնում, որ օրական երեք անգամ է տեղի է ունենում, մի անգամ ալ ազգութիւնների շոգենաւերից աւելի։ Մանաւանդ ծովի անհանդարտ ժամանակ, երբ մարդ ստիպուած է լինում ննջարանում անշարժ մնալ, շատ ձանձրալի է թւում այնքան անգամը, 'ի նկատի ունենալով որ արևելեան ճաշակին անգլիական խոհանոցի կերակուրները՝ նման գերմանականին, շատ անախորժ և միակերպ են։ Գերմանացու համար առհասարակ ասում են, թէ սաստիկ քիչ է խօսում, բայց անգլիացուն տեսնելով՝ կարծիքդ իսկոյն կը փոխէք։ Ճաշի ժամանակ նաւապետը ոչ միայն ինձ հետ էր քիչ խօսում, այլ և իւր օգնականի ե այնքան քիչ, որ միայն երրորդ օրը, երբ սխալմամբ մի մեծ խնդրի վերաբերեալ ինձ հետ խօսք բացեց ե ինձ բաւականին նեղը ձգեց, զարմացմամբ հարցրեց՝ մթթէ ես անգլերէն չեմ խօսում.-«մի քիչ», ասացի ես,—«այո» պատասխանեց խօսակիցս։ Եւ այս օր էլ այդպէս վերջացրինք։

Դառնալով կրկին մեր ֆրանսիական նաւին՝ այստեղ միւս ծայրայեղ երևոյթին հանդիպատես ենք լինում. վերին աստիճանի աշխոյժ է տիրում շոգենաւի վերայ, մանաւանդ որ զանազան կողմերից ճանապարհորդներ կային։ Այս կողմից իտալացիները բաւականին նման են ֆրանսիացիներին, միայն առաջինները կարծես աւելի գրաւիչ տպաւորութիւն են թողնում մարդուս վերայ։ Իտալացուն ով որ չը համակրէ ու սիրէ՝ նա կարծես չէ սիրում գեղարուեստը. սակայն այս երկրում նոյնպէս «ընտանիքը առանց հրէշի չէ», ինչպէս ասում է ռուսական առածը. ճանապարհորդների գլխին այնպիսի խաղեր են գալիս, որ ուրիշ երկիրներում հաղագիւտ բան է։ Իհարկէ, այդ որոշ դասակարգի մարդիկն են, որ օտարականների հետ միշտ գործ ունենալով՝ նրանց հարստահարելը բան ու գործ են չինել։ Թէ ֆրանսիական ե թէ իտալական «Մարկ Վենչետի» շոգենաւերը ընտիր են ամեն պարագաներով։ Այլ է աւստրիական «Լլոյդ»-ի ընկերութիւնը, որ չը կարողանալով մրցմանը դիմանալ՝ մեծ ձախորդութեան մէջ է և կարծես իւր մեծ կորուստները ուղևորների կռնակից է հանել կամենում, որովհետև կերակուրն այնքան վատ էր, որ մենք ուախլեցանք գանգատուել, թէ միայն ձիթապտուղն է, որ հնարաւոր է ուտել։ Բայց և լուեց մեր խօսքը։ Լլոյդի շոգենաւերը Տրիեստից լինելով՝ գլխաւորապէս իտալախօսներ, մի լեզու, որին տեղեակ չը լինելով հանդերձ՝ ֆրանսերէն և լատիներէն դիտեցողը, բառերի վերջը օ և է աւելացնելով՝ շատ անգամ ուղղութեամբ իւր միտքը հասկացնում է։

Բայց մենք կարծեմ մոռացանք, որ տակաւին Մարմարեան ծովի վերայ ենք և արդէն հասել ենք Դարդանել քաղաքին, որ Տրովադայի աւերակներից դէպի արևմուտք՝ իսկ Նեղուցի դրան մօտ է գտնուում։ Օսմանեան պետութեան մէջ Բոսֆորից լետոյ այս երկրորդ կէտն է և պատերազմական տեսակէտից առաջին տեղն է բռնում, որ առանձին ինձ

պատկառելի երևոյթ է ներկայանում։ Մի միջակ գետի նման նեղուցը երկու կողմից բազմաթիւ թնդանօթներով է պաշտպանւած, որոնք հողէ պարիսպների մէջ գաղտագողի թաղուած՝ հեռուից միայն իրանց ահաւոր բերաններն են ցոյց տալիս։ Հէնց որ այս կէտին հասար, կանգնիր, որովհետև մինչև թոյլտուութիւն չը դալ, հրաման չը կայ անցնելու։ Բայց այս ժամանակակից ուժեղ հողէ բերդերի դէմ կան և ահաւոր մարտանաւեր, որոնք աշխարհիս բոլոր ծովերն նաւատորմիղներով չրջելով՝ ի ցոյց են հանում իւրաքանչիւրն իւր հայրենիքի փառքն ու զօրութիւնը։ Այս մարտանաւերը, որոնք մի մի պատկառելի շարժական բերդեր են, չարունակ 5—10 երեում են Միջերկրական ծովի վերայ և լաճախում Զմիւռնիան, բայց Դարդանէլին մօտենալու իրաւունք չը կայ։ Զմիւռնիան, որ առանց այն էլ շատ շարժուն քաղաք է, երբ նաւատորմիղ է դալիս և 4—5000 զինւոր է լցւում, առանձին լիմն կեանք է ստանում։ Քարափը և այլ գլխաւոր փողոցները լի են անգլիացիներով, թերևս և ռուսներով, կամ մի այլ անդամ՝ ֆրանսիացիներով ու գերմանացիներով. տեսարանները շատ հետաքրքրաշարժ են՝ էլ ասիական ու եւրոպական «օլիններ» չեն մնում, որ Պլուտոնի այս անհոգ զաւակները չը թափեն։

Դարդանելից յետոյ մենք կրկին դալիս ենք մի բաց ծով, խաղաղ Մարմարեան ծովը, որին ալեկոծութիւնը կարծես օտարոտի երևոյթ է թւում։ Այս ծովի մէջ նոյնպէս սփռւած են մանրիկ կղզիներ կամ հեռուից մեղ երևում են բարձրաբերձ լեռները եզերքների վերայ։ Մի քանի ժամ ևս՝ և ահա մենք մօտենում ենք պատմական Սան-Ստեֆանոյին որ մի գեղեցիկ ամարանոցի տեսարան է ներկայացնում, իսկ կէս ժամ յետոյ մենք արդէն մայրաքաղաքի նաւահանգիստն ենք։ Մարմարեան ծովից մտնելիս՝ Պոլիսն այնպիսի սքանչելի տպաւորութիւն չի թողնում, ինչպէս այդ լինում է, երբ մարդ Սև ծովից է մտնում։ Բոսֆոր նեղուցը իւր պատկառելի թնդանօթներով, սաղարթալից այդիների մէջ խեղդած, հիանալի ծովափնեայ ապարաններով, որոնք նեղուցի երկու կողմը կանաչակապոյտ ծովի վերայ կարծես ցուցահանդէս են եղել մրցելու և անցորդներին հիացնելու։ Եւ լիրաւի, որքան անդամ էլ մարդս անցած չը լինէր այս անզուգական տեսարանների առաջից, միշտ նրանք նորանոր հրապոյրներ են ներկայացնում։ Որքան էլ դոլէր բանաստեղծն այս արևելեան ճոխ ու սքանչելի տեսարանները, դեռ քիչ է։ Այս տարօրինակ քաղաքը, որքան արտաքուստ գեղեցիկ է, այնքան ներքուստ խառն ի խուռն է և տգեղ։ Այն դիւթական պատկերը, որ մեր առաջ է սփռւած՝ մի ակնթարթում անհետանում է և մենք մեղ կրկին իրական աշխարհի մէջ ենք զդում։ Թէև Պոլիսը մայրաքաղաքն է, սակայն ներքուստ ամենևին չէ կարող մրցել Զմիւռնիայի հետ, որ փողոցների կանոնաւորութեամբ, մաքրութեամբ

և այլն շատ բարձր է նրանից։ Թէև Պոլիսը կենտրոն է, սակայն այնտեղ չքաւորութիւնն ու աղքատութիւնն աւելի է տարածւած, այս մեծ քաղաքի վերայ եւրոպական քաղաքակրթութիւնը չէ կարողացել այնպէս ազդել, ինչպէս Զմիւռնիայի։ Պոլսի միայն Բերա կոչւած թաղն է եւրոպական, այսինքն մի երկու փողոցներ, որ բանի նման են և գլխաւոր փողոցը մինչև անդամ մայրաքաղաքի արժանի։ Պոլսի մէջ պատահող հրդեհները աւելի և աւելի սպառել են տնատէրերի ոյժերը. ամբողջ թաղեր կը տեսնէք, որոնց բնակիչները պաստպարւած են տախտակէ ողորմելի տնակների մէջ։ Այս անդամ յունիսի մեծ հրդեհին ես ականատես էի չոգենաւից. մի քանի րոպէում մի կէսից 3, 4, 6 և այլ թաղեր բռնկեցան, սարսափելի բոցը կարծես չոգեշարժ մեքենայի նման լառաջ էր դիմում. մենք քանի հեռացանք, այնքան մթնեց և երկինքն աւելի կարմրեց։ Նաւապետը պատմում էր, որ դիշերւայ ժամը երկուսին երկինքը տակաւին կարմիր էր։ Միայն եւրոպական մասն է, որ աւելի քարաշէն է և հրդեհի դէմ աւելի պաշարաստութիւն ունի, իսկ երբ միւս մասերում մանաւանդ հողմերի ժամանակ հրդեհ է ընկնում, ինչպէս վերջին անդամ, զարհուրելի է, էլ չը գիտես թէ երբ է վերջանալու։

Պոլսի կեանքից ես այս անդամ շատ պատմելիք չ'ունիմ, որովհետև արձակուրդների կարճ ժամանակամիջոցը և իմ հարենիքի հեռաւորութիւնն ինձ թոյլ չը տուին մի դիշերից աւել մնալու թէ գնալիս և թէ վերադարձիս։ Մանաւանդ Պոլսում չ'արժէ մի երկու օր մնալ, մինչդեռ 1—2 շաբաթն էլ քիչ է. չը նայելով որ ձիաքարշ երկաթուղիներ, երկաթուղիներ և չոգենաւեր կան, այնու ամենայնիւ իւրաքանչիւր ալեցելութիւն միջին թւով մի օր արժէ։ Իսկ եթէ կամենում ես դպրոցներ ու այլ հիմնարկութիւններ լաճախել, ամիս ասա ու կաց. Մեզպէս ուղևորն ամենից լաւ կ'անէ, եթէ նա այն հաւատարիւտ և խորհրդաւոր կամուրջն երթայ, որ միացնում է եւրոպական մասը հանդիպակաց եզրի հետ։ Դիւղերից գործի գալու ժամանակ ու երեկոյեան անները վերադառնալիս՝ նա կը տեսնէ ի թիւս այլ բազմաթիւ մարդերի և իւր վաղաժամ բարեկամներին բոլորովին անսպասելի, և հաճելի էլ ալգ է։ Այս կամրջից մի րոպէում հազաւոր մարդիկ են անցնում և այնպէս արագ ու հապճեպ, որ եթէ դրանց չատերին բռնես ու պատճառը հարցնես, իրանք էլ չը գիտեն։ Այս տարօրինակ տպաւորութիւնը մարդու գլուխը պտոյտ է բերում, երբ երկար է նայում։ Ակամայ փչում եմ Վիեննայի բորսան, ուր կեանքի տաղնապը այն հարիւրաւոր մարդիկների՝ վաճառատանը դժանոցի կերպարանք է տալիս։

Մի քանի րոպէում այս հաղարաւոր անց ու դարձ անողների մէջ մենք տեսնում ենք աշխարհիս ցեղերի բազմազան ներկայացուցիչները իրանց բազմատարազ դգեստներով։ Այստեղ նաև տաճկուհիներն արհամարհում են հինաւուրց թանձր քողը և երեսաց չրջում են, միայն տակաւին թափանցիկ սաւանի մէջ փաթաթւած, իսկ ներքուստ աւելի եւրոպական

տարաղի նման։ Այս կամուրջը մի պատուական բնական բեմ է, ուր մեր աչքին ի թիւս կենսական այլ երևոյթների՝ նաև ներկայանում է հարստութիւնը չքաւորութեան հետ, արտաքին երջանկութիւնը թշուառութեան հետ։ Թերևս չափազանցութիւն չը լինէր ասածս, որ դժուար է գտնել աշխարհումս մի կէտ, ուր այնպէս աղդու կերպով ներկայանար ապահոված և զրկուած մարդկանց տարբերութիւնն՝ ինչպէս այստեղ։ Երևակայեցէք բազմաթիւ շքեղ կառքեր, երբեմն նաև ոսկեզօծ, հիանալի ձիաներով և թաւիչ, մետաքս հագած փարթամ տէրերով, որոնց աջ և ձախ կողմը կամուրջի վերայ նստոտած են բազմաթիւ աղքատներ՝ լաճախ իրանց մանուկները գլուխներին հաւաքած, նիհար, խոցոտած, տգս ու այն զգալարանքներից զրկուած...

Գալով մեր ազգային կեանքին՝ Զմիւռնիայի մասին խօսելիս արդէն նկատեցի, որ տաճկահայերի ուսումնարանական գործը դեռ խանձարուրի մէջ է, որովհետև սրանք ոչ ուսուցչանոցներ ունին և ոչ մանկավարժական թերթեր։ Թէև ունին այսպէս անուանեալ «Կենտրոնական ուսումնարանական խորհուրդ», սակայն սա լոկ անուանական է, որովհետև ինչպէս որ օրինակ Զմիւռնիան ծրագրի, դասագրքերի, ուսուցիչների նշանակելում որոշ պաշտօնական միջամտութիւն չէ ունեցել իւր թեմում գտնուող շրջանների վերայ, այնպէս և Պոլսի այդ ուսումնարանական խորհուրդը թեմերի վերայ ոչինչ իրական ազդեցութիւն չ'ունի։ Ով ինչ ուզում է, այն է անում։ Այս հանգամանքներում ի զուր են նաև թեմական տեսուչներ որոնք չարունակ դաւառները շրջէին և կենտրոնի կանոնները գործադրել տային։ Այս կողմից Միացեալ ընկերութիւններն աւելի կենտրոնացում ունին, սակայն իբրև մասնաւոր հիմնարկութիւններ՝ կարօտում են դեռ շատ կատարելագործութեան։

Նա վերը փիշեցի որ Պոլիսը չունի մանկավարժական թերթեր և շուայլութիւն չէր լինիլ այդ, երբ մինչև անգամ քաղաքական և գրագիտական ամսաթերթեր չ'ունի, երբ այստեղ այնքան սիրահարներ կան այս ճիւղերի համար։ Պոլսում դեռ «Մուրճ» ոչ. ոք չէ ստանում և շատ քչերը այնտեղ նրա գոյութեան մասին տեղեկութիւն ունին։ Միևնոյնը կարելի էր ասել աննման բացառութեամբ կարծեմ «Աղբիւր»-ի և չաբաթաթերթերից «Արծտգանգ»-ի ու «Ցարազ»-ի մասին, մինչդեռ Զմիւռնիան աւելի աչքաբաց է և կարծեմ այս բոլոր թերթերը կենտրոնից համեմատաբար շատ է ստանում, մինչդեռ կենտրոնի թերթերն ու մարդիկն են, որ պէտք է բանալին դաւառների միտքը։ Բայց ոչ ապաքէն Ստամպօլը մեծ քաղաք է, նա չի կարող փոքր բաներ տեսնել։

Պոլսից անցնողը խօսելով տեղացի հայերի մասին՝ չէ կարող զանց առնել պանդուխտ հայերը, որոնց մեծամասնութիւնը մշակ դասն է կազմում։ Եթէ ժամանակ չունիս 24 ժամում այցելութիւններ անելու, զնա մանաւանդ նաւահանգիստ, այստեղ հարիւրներով աչքիդ առաջ կ'ելնեն։

Շահաղրգիռ է հայ մշակ դասի վարչական եղանակը, որ կառավարում է նորա գործունէութիւնը նահապետական ձևով։ Մշակներն ունին իրանց նահապետը, դանձապահը և այլ վարչական մարմիններ, որոնք ընդհանուր եկամտոյը գումարելով՝ բաժանում են իւրաքանչիւրին՝ համաձայն որոշ պայմանների։ Խիստ կարդ ու կանոնը և անպայման հնազանդութիւնը օրինակելի է։

Աշխատութեան ժամանակ հայ մշակին համեմատաբար լաւ տրամադրութեան մէջ ես գտնում և քանի շատ են աշխատակիցները, այնքան աննշան է երևում մինչև անգամ ամենածանր բեռը։ Սրանց պարապութեան ժամերը պակաս հետաքրքրական չեն. մենք տեսնում ենք գանազան կենտրոններում պատերի տակ բաղմաթիւ մշակներ նստոտած, մի քանիսը համախմբած կատակներ են անում, միւսները վիճում, կռւում, երրորդ խումբը լուրջ խօսակցութիւն անում, մի քիչ հեռուն առանձնացածներ, որոնք խորասուզուած իրանց մտածմունքների մէջ, կարծես ոչինչ չեն լսում ու տեսնում շրջակայքից։ Թէ ընտանիքի տէր մարդ է այդ խեղճը, արդէն դրկում ու համբուրում է իւր «ճղերին ու վժերին», իւր խորոտիկ ձագուկներին», թէ երիտասարդ է, հաշւում է իւր վաստակած փողերն ու տակաւին մնալու ժամանակը, թէ երբ արդեօք պիտի կարենայ պատենական պարտքը թափել և հարսնացուն ու հարսանիքը տեսնել։ Եւ ահա գլուխը քարին կռացաւ, նա արդէն անուշ երազի մէջ է, հայրենի խրճիթում օրուայ թագաւորն է, նորա բաղձալի հարսանիքն է, բայց աւաղ, «մշակ», բղաւեց մի խրոխտ ձայն՝ և բոլորը վեր թռան և ապուշի պէս այս ու այն կողմը նայեցին ու վազում են իրանց խռովութիւնը խանգարող մարդուն «թէմէլլէհ» անելու։

Ես այս անգամ էլ տեսայ բաւականին մշակներ հայրենիք վերադառնալիս և համարեա իւրաքանչիւր շոգենաւի մէջ դուք կը տեսնէք անց ու դարձ անող բաղմաթիւ հայ մշակներ։ Դիշեր է, բոլորը քնած են, մի խորհրդաւոր լռութիւն է տիրում շոգենաւի մէջ և ահա հայ մշակների տաղերն ու խաղերն են, որ ընդհատել են համարձակում այդ խորին լռութիւնը։ Մանաւանդ մեծ քաղաքներից վերադարձող մշակները գիտեն նաև ազգային երգեր։ Երբեմն լսում են տխուր երգեր. այդ հրաժեշտի ձայներն են մայրաքաղաքում անցկացրած զարհուրելի ժամերին, մերթ հնչում են ուրախ տաղերն ու երգերը,—այդ հայրենիքի սէրն է, որ ներշնչում է։ Մայրաքաղաքից վերադարձող մշակն այլ ևս այն ողորմելի խղճուկ մշեցին չէ. նա բաւականին կոկ է հագնուած, նորա միտքը զարգացած է, աչքը բաց։

Հետևեալ օրն ես մեկնեցայ Պոլսից։ Այս անգամ թէ գալիս և թէ վերադարձիս այս քաղաքն այնպէս չը վրդովեց ինձ, ինչպէս այդ ինձ առաջին անգամ արտասահմանից վերադառնալիս պատահեց։ Այս անգամ արդէն երրորդը լինելով՝ ես արդէն տեղեակ էի օտարին շրջապատող հան-

ժամանքներին, ես միեւն անգամ կարող էի ինձ պէտք եղա՝ը տաճկերէն բացատրել, ուստի ն՝մակուկավարների «բեզըմը» կոչելուն արժանանալ։ Երբ բանն այստեղ հասաւ, մի բուրլու բանը կարող էք յաճախ 10 կոպէկով էլ յառաջ տանել։ Այսպէս է ընդհանրապէս ե այլ երկիրներում, սակայն նայելով տեղական հանգամանքներին՝ ահագին տարբերութիւններ կան։

Գիւ՛ Սև ծովը ամառ ժամանակ խաղաղ է։ Նորա մերթ լերկ ե մերթ կանաչազարդ եզերքները երբեմն երեւում ու երբեմն անհետանում էին մեր տեսութիւնից։ Մենք մօտենում էինք գեղեցիկ Տրապիզոնի նաւահանգստին։ Այս ծովափնեայ քաղաքը կարող էր իւր դիրքով շատ կարեւոր դեր կատարել, բայց ափսոս որ երկաթուղային հաղորդակցութիւն չունի ներքին նահանգների հետ։ Իւր կեանքը համարեա մարած է, որովհետև չ՝ունի այնպիսի արտադրութիւններ, որոնք մեծ գումարներ ներս բերէին։ Տրապիզոնը իւր բնակիչներով մի համեստ դաւառական քաղաքի տպաւորութիւն է գործում։ Սրանց թէ եկամուտներն են աննշան և թէ կեանքի պահանջները։ Հայ կանայք սաւան են ծածկում, տաճկուհիք նոյնպէս և հաստ քող, որով զրկւած են իրանց պոլսեցի քոյրերի ազատութիւնից։

Մեր հայրենակիցներն այս քաղաքում աւելի մեծ ուսումնարաններ են պահում, քան թէ իրանց ոյժը կը զօրէ։ Թէև ժողովուրդն աւելի խեղճ է քան Զմիւռնիայինը, սակայն, ինչպէս երեւում է, աւելի տրամադիր է իւր զաւակներ կրթութեան համար հատուցանելու՝ քան զմիւռնիացին։ Նթէ չեմ մոռացել, Տրապիզոնի երկսեռ վարժարանները մօտաւորապէս 1200 աշակերտներ ունին, մինչդեռ Զմիւռնիայինը՝ 500։

Զը նայելով որ վարժարանների եկամուտները համեմատաբար շատ նւազ են, այսու ամենայնիւ եռանդուն հոգաբարձութիւնը ջանք է դնում մանկավարժ տեսուչ և ուսուցիչներ ունենալու։ Սակայն այդ շատ անգամ չափազանցութեան է հասնում, որովհետև հրաւիրում են պաշտօնեաներ, որոնց ուռճիկը տարւայ վերջն անկարող լինելով հատուցանել, հարկադրւած են լինում, «նւիրեցէք վարժարանին քանի մի ամսական» խնդրելու։ Այս լաւ չէ։ Որքան որ համակրելի է հոգաբարձութեան գիտակցական գործունէութիւնն, այնքան ևս անհասկանալի են այս անհաչիւ նախագիծները, որոնց չնորհիւ թէ այդ գործը սիրողների սիրտն են պաղեցնում Տրապիզոնի վերայ և թէ գործերն այնպէս լետ են ընկնում, ինչպէս այս տարի սեպտեմբերի սկզբներին տակաւին ոչ տեսուչ և ոչ էլ ուսուցչական խումբ կար։

Ամեն անգամ, երբ ես անցնում եմ այս քաղաքից՝ նորա հայ երիտասարդներն իմ վերայ ուշիմ, աչքաբաց ե եռանդուն մարդկանց տպաւորութիւն են գործում։

Շոգենաւերը Տրապիզոնի նաւահանգիստներում առհասարակ չորս

ժամ են կանգնում ու երեկոյեան դէմ դէպի Կովկաս մեկնում։ Տրապիզոնից Բաթում 7—8 ժամուայ ճանապարհ է, ուստի և շոգենաւերը չափաւոր արագութեամբ են դիշերուայ ժամերին լառաջ գիմում՝ առաւօտեան նաւահանգիստը լինելու համար։ Այս քաղաքն իւր աճեցողութեան հասակում լինելով՝ միշտ նորանոր տպաւորութիւններ է գործում ուղեորի վերայ։ Ցիշում եմ այն խղճուկ Բաթումն իւր փայտեայ խրճիթներովն ու հիւրանոցներովը, երբ ես սորանից եօթը տարի առաջ արտասահման էի գնում և զարմանում՝ թէ ինչպէս բուսեց այս նոր քաղաքը իւր ընդարձակ կանոնաւոր փողոցներով, գեղեցիկ տներով, պարտէզներով ու ճոխ զբոսավայրով։ Քաղաքակրթութիւնն ու քարիւղն էին այն երկու հրաշագործները։

Բաթումի փոքրիկ հայկական հասարակութիւնը շատ անգամ իրան մասին լսել է տալիս լրագրներում։ Այս քաղաքում գործում են, պէտք է մտածէ ընթերցողը, սակայն այս երիտասարդութեան գործունէութիւնը հետևողական չէ երևում ինձ, որովհետև կարծես երբեմն բոցավառում, իսկ երբեմն առկայծում է։ Այս, ի հարկէ, մեր կեանքի մէջ բացառիկ երևոյթ չէ, ոգևորութիւնը տեղական չէ մեր մէջ։ Բաթումը, ուր հաւաքուել են զանազան կողմերից ազգ և ազգ սովորութիւնների, զարգացման, համոզմունքների տէր հայեր, չ'ունի դեռ ևս կազմակերպուած ընկերական կեանք, վասն զի հասարակութեան անդամները տակաւին ձուլուած չեն։ Այս, կարելի էր ասել, նորածին քաղաքի հայերի զարգացած դասը կազմում են վաճառական և ծառայող երիտասարդները, որոնք թուչնի անհոգ կեանքն են վարում. ոչ ընտանիք ունեն և ոչ էլ մտածում են ունենալ։ Կարծես առժամանակ եկել են այս վաճառաշահ տեղը փող վաստակելու և ինչպէս որ վաստակել են՝ ծախսելու և մի օր ել գիտէ որ կողմը թռչելու։ Սրանք ոչ տուն ունեն, ոչ տեղ, ոչ հաւ ունեն և ոչ ճիւ. Ազգ բան էր երէկ նստակեաց, զաւակների տէր մարդիկ լինէին։

Հինաւուրց փայտաշէն խղճուկ եկեղեցին քանդել էին և մի հաստատուն ու գեղեցիկ հիմք էին դրել, միայն ափսոս որ հողի երեսը հանելով՝ դադարել էին։ Պէտք է երկաթը տաք ծեծել, եթէ ոչ՝ ժողովուրդը կը պաղի և կը մերժէ իւր օժանդակութիւնը։

Ուսումնարանի երկու դասարանները իրանց պարագաներով կանոնաւոր էին։ Նայելով տեղական հայերի վիճակին՝ կարելի էր աւելի սպասել։

Ես պէտք է չտապէի դէպի Թիֆլիս։ Կրկին այն գեղեցիկ երկաթուղու վերայ էի, որ իւր ծովային, անտառային, լեռային բազմազան տեսարաններով իմ տեսած ամենագեղեցիկ ճանապարհներից մէկն է։ Մանաւանդ անուշ և կազդուրիչ է Կովկասեան հովը իւր զաւակներին, որոնք հեռու երկիրներից են վերադառնում։ Զարմալի է տեսնել տեղական ցեղերը իրանց շնորհալի զգեստներով ու բնատուր գեղեցկութեամբ։ Քանի այլ ազգեր ու ցեղեր աւելի են ենթարկուում եւրոպական ճնշող նորաձևութեան ճիրան-

ներին՝ վրացիք և մանաւանդ իմերէները աւելի ևս փալչում են իրանց սեպհական ձեռագործի արտադրութիւններով։ Իսկ այն ուրախ ու զուարթ տրամադրութիւնը, որի մէջ կարծես միշտ գտնւում են այս անհոգ ժողովրդները, մի հետաքրքրական ցեղական երևոյթ է։ Դրանց խօսակցութեան ձևն ու եղանակն այնպէս ծաղրածու են, որ մարդս այդ լեզուին անծանօթ լինելով հանդերձ՝ հազիւ է իրան զսպում ծիծաղելուց՝ մինչև անգամ եթէ անծանօթ ընկերութեան հետ է նստած։

17—18 ժամ լետոյ Բաթումից Թիֆլիս ենք հասնում։ Կովկասեան այս մայրաքաղաքը, որ հազիւ թէ Զմիւռնիայի չափ լինի, մանաւանդ իւր մրտաւոր կեանքով շատ բարձր է վերջինից։ Նորա թատրոնները, գրադարան ու ընթերցարանները, բազմապիսի օրինաւոր զպրոցները չը կան նաև Պոլսում։ Տաճկաստանի տնտեսական կեանքն եւրոպական զանազան աղգութիւնների հետ կապած լինելով՝ եթէ կամենալ էլ գիտութիւնների մէջ շատ լառաջ գնալ, անհնարին է, որովհետև նորա դպրոցներն իրանց ոյժերը ստիպած են սպառելու շատ օտար լեզուներ սովորելու համար։ Կովկասն և իւր մայրաքաղաք Թիֆլիսն այժմ այնքան զարդացել են, որ եթէ այստեղ այսօր մի հայալսարան կամ այլ բարձրագոյն հիմնարկութիւն բացէր՝ ոչ տեղական ուսանողների և ոչ մինչև անգամ ուսուցչապետների պակասութիւն կը զդացէր։

Թիֆլիսն իւր մեծագոյն և կարևոր թաղերի գեղեցիկ փողոցներով ու ճաշակաւոր տներով կարող է մրցել եւրոպական շատ քաղաքների հետ. Տաճկաստանի մայրաքաղաքի մի քանի փողոցները միայն կարելի նորա հետ համեմատել։ Միւս կողմից Կովկասի մայրաքաղաքը զուրկ չէ նաև դուտ ասիական թաղերից, որոնց կեանքը և կարգ ու սարքը միւս թաղերի ճիշտ հակապատերն է։

Թէ գնալիս և թէ վերադառնալիս Թիֆլիսն ես համարեա ամայի տեսայ։ Ամարային ամիսներին նորա կեանքը կարծես մեռած է, որովհետև քիչ թէ շատ կարողութիւն ունեցողը ամարանոց է փախչում։ Այլ էր երևոյթն արդէն օգոստոսի վերջին օրերը. բազմաթիւ ուսումնարանների մէջ հարցաքննութիւններն սկսել էին, պարտաճանաչ ծնողները մինչև անգամ գաւառներից որոշածից մի քանի օր առաջ իրանց զաւակներին բերել են։ Այլ է, օրինակ, մեր Զմիւռնիայի հաշիւը։

Այստեղ ծնողներն ունեն իրանց ամարանոց գնալու որոշ օրերը. երբ ժամն հասաւ, այլ ևս չեն նայիլ թէ իրանց զաւակները դասեր ու քննութիւններ ունեն, իսկ թէ լետոյ հոկտեմբերին կամ նոյեմբերին կը վերադառնան, այդ էլ իրանց «քէֆն» է։ Այսպէս է հայ ժողովուրդը, այսպէս են քաղաքիս լոյներն ու եւրոպացիք. ինչու. որովհետև աշակերտի խլխլոց է, տարաւ որ օրին ու ժամին զաւակիդ տանես, դրկաբաց կ'ընդունեն։ Եթէ աղգային վարժարանը չ'ընդունի, սպառնալիք կ'տաս, թէ բողոքականի, կաթոլիկի և այլն կ'տանես, և լաղթութիւնը տարած ես։

Հայկական այլ և այլ ընկերութիւններ նաև այս կենտրոնում շատ չը կան, եղածներն էլ տեղական եռանդ չ'ունին, մինչև անգամ ամենամեծ ոգևորութիւնը շատ շուտ է պաղում այս քաղաքում և ալսպիսով փոխանակ գաւառներին դարկ տալու՝ նրանց կամ վհատեցնում է և կամ նրանց լարաջաղիմութեան վերալ նախանձում։ Թիֆլիսն այժմ այնքան ընտիր թատերական ոյժեր ունի զարգացած դասից, որ կարող էր մի պատկառելի թատերասիրաց խումբ կազմելով՝ առանց իւրաքանչիւր անգամ ծանրաբեռնելու՝ ամսական 1—2 անգամ գեղեցիկ ներկայացումներ տալ։ Երբ բազմաթիւ անդամներ լինէին, իւրաքանչիւրին տարեկան 2—3 անգամ հազիւ հերթը դար։ Հետզհետէ մի համեստ գումար կազմելով՝ կարելի էր այն ժամանակ իրագործել մեր թատերական գործի հին ու անձնուէր զինուոր Զմշկեանի նախագիծը, այն է՝ գաւառները շրջել և հաւաքել ամենարնդունակ ոյժերը։ Երբ այս մասին խօսում էինք պ. Զմշկեանի հետ՝ ես շատ հաւանեցայ այս միտքը՝ փորձով գիտենալով որ մեր գաւառներում դերասանական գանձեր կան թաղուած անլատութեան մէջ։ Մենք առհասարակ չենք հաւանում մեր զրացի վրացիներին, բայց տէսէք նրանք ինչպէս համեստ միջոցներով սկսեցին ու կենդրոնացրին իրանց ոյժերը և պակասն էլ հայերից լրացրին։ Մեծ պակասութիւն է եթէ մանաւանդ նորագոյն կրթուած երիտասարդութիւնը այս ամենակարևոր գործերից մէկը զեռ քնած թողնեն։

Թիֆլիսի հայերի մտաւոր կեանքի ամենագլխաւոր տարրերից մինն է մամուլը։ Այս գործունէութեան ներկայացուցիչ թերթերի մասին խօսելը և նրանց համեմատելը ամենածանր և փափուկ խնդիրներից մէկն է, որ մի ուղղորդ գրչի թեթև ծայրով չոչափելու բան չէ։

Որովհետև ես իմ նկարագրութեանս մէջ տաճկա և ռուսահայերի կեանքի երևոյթներն եմ համեմատում, ուստի այս ուղղութեանը հետևելով մենք կարող ենք ասել, որ Թիֆլիսի հայ մամուլն իբրև ամբողջութիւն Պոլսինի դէմ դնելով՝ մենք առաջինը աւելի շուրջ և հաստատուն վիճակի մէջ ենք տեսնում։ Շատ հազիւ է պատահում, որ Թիֆլիսում մի թերթ հրատարակէր, առանց նորա գոնէ մօտիկ ապագան (տարիները) կ:ռելու, իսկ Պոլսում մօտիկ շաբաթներն էլ կշռի դնելը առհասարակ աւելորդ բան են համարում։ Այս տեսակէտից Պոլսի այժմեան թերթերի մէջ բացառութիւն են կազմում «Արևելք»-ը որ ամենահաստատուն հիման վերալ է գրած, «Հայրենիք» ու «Մասիս»-ը, որոնք ալսուամենայնիւ չեն կարող վերջին ժամանակներս առանց ընդհատումների հրատարակուելու։

Գալով երկու կողմերի մամուլների մտաւոր ոյժերին՝ Պոլսի թերթերն աւելի քաղաքական-գրական են։ Բացի սրանից նրանց գլխաւոր նիւթն է Պոլսի և մտաւոր քաղաքների կեանքը, իսկ հեռաւոր հայրենիքի ուսումնարանական, տնտեսական և այլն կեանքի մասին միայն պատահական տեղեկութիւններ ենք կարդում։ Թիֆլիսի թերթերն ընդհակառակն ապ-

ռում են գլխաւորապէս գաւառներով և գաւառների համար։ Այս հետաքրքրաշարժ երևոյթի պատճառն ես այսպէս եմ հասկանում՝ տաճկահայերը գաւառներում չ'ունեն այնքան զարգացած թղթակից կամ աշխատակից ուսուցիչներ, որոնք Կովկասեան թերթերի գլխաւոր աշխատակիցներն են. Պոլիսը հեռու է գաւառներից և զուրկ կանոնաւոր հաղորդակցութիւնից. մայրաքաղաքի թերթերի ղեկավարները ծնուած չը լինելով՝ գաւառներում և Պոլսում կամ հեռու Եւրոպայում ուսում առած լինելով չեն ապրել ժողովրդի կեանքով, չեն զգացել նրա կարիքները։ Այս այսպէս լինելով՝ մենք պէտք է Պոլսի թերթերում աւելի տեսութիւններ՝ քան բուռն զգացմունքներով տոգորուած գրութիւններ գտնէինք։ Խօսելով Թիֆլիսի թերթերի մասաւոր, բարոյական ու նիւթաւոր հաստատութեան մասին՝ մենք չը պէտք է մոռանանք՝ որ նրանց խմբագիրները, շատ աննշան բացառութեամբ, գերմանական մասնագիտութեան հետևած և գերմանացու տոկունութեամբ և չրջահայեցողութեամբ օժտուած մարդիկ են եղել և են, որոնց աջակից են այլ ռուսական ու գերմանական համալսարանական աշխատակիցներ, թէև վերջիններս որոշ ու տեղական խմբերի չեն կազմել։ Թէև մեր Կովկասեան թերթերից և ոչ մէկն «Արևելք»-ի ընկերութեան պէս հաստատուն դրամագլուխ չունի, թէև բաժանորդների թիւն առհասարակ 1200-ից հազիւ է անցնում, այնուամենայնիւ նրանք օրէցօր ապրում ու 10—20 տարիներ են լարատևում։ Այսպիսի ծանր հանգամանքների մէջ լարատևութիւնը ինքն ըստ ինքեան մի մեծ բարոյական արժանաւորութիւն է, վասն զի նա ապացոյց է ինքնուրոյն ոգի ներկայութեան, որ մի մխիթարական երևոյթ կարելի է համարել Կովկասեան հայերի կեանքի մէջ։

Մի քանի օր լսող ես թողի Թիֆլիսը։ Զարժէր այդ ժամանակ երկար մնալ, երբ քաղաքը համարեա դատարկ էր։ Իմ ուսանողական ընկերակիցներից շատ քիչ մարդ տեսայ, որոնց հետ առ 'ի սրտէ մի օր խօսիլը մի տարուայ արժէք ունէր։ Մեր կեանքի այլ և այլ ասպարէզներում գործող երիտասարդներն երբ Թիֆլիս անցնում են, հարկադրուած են լինում միմեանց իրանց գործունէութեան մասին հաշիւ տալ ու հաշիւ առնել. մի ընտիր սովորութիւն, որ շատ է նպաստում աղգային առաջադիմութեան։ Վերադարձիս ես աւելի մարդ տեսայ Թիֆլիսում և մասամբ մխիթարուած ու գոհ սրտով հեռացայ այն քաղաքից, որ մեր մտաւոր կենդրոնն է։

Թիֆլիսից ես մեկնեցայ դէպի գաւառները և նախ և առաջ հասայ գեղեցիկ Բորժոմի վերայով Ախալցխա։ Բորժոմը Կովկասի ամենագեղեցիկ և սիրելի ամարանոցն է, թէև անցեալ տարի ես Աբասթումանում առաւելութիւններ տեսայ, որոնցից զուրկ է առաջինը։ Բորժոմի աքանչելի անտառները, որոնք Կովկասեան բնութեան թագն են համարւում, իմ վերադարձիս հրդեհած տեսայ, որ քանի գնում՝ սաստկանում էր, ամարանոցները ծխով էր լցւել և գիշերները ըոցն ահագին տարածութեան մէջ երևում էր։ Չը նայելով որ նախկին փոխարքայ մեծ իշխանի Միխայիլ Նիկոլայևիչի

գլխաւոր հարստութիւններն էլ այդտեղ էին դտնւում, ահագին քանակութեամբ ղօրք էր ուղարկւած, այնուամենայնիւ մրցելու հնար չէր երևում։

Ախալցխան մի փոքրիկ քաղաք է. հեռուից իւր գեղեցիկ դիրքով և պարտէզներով Տրապիզոնի տպաւորութիւնն է անում, միայն թէ իւր միջից հոսում է Քուր գետը, որ դոլանում է այստեղ երկու գետերից, մինը Արդահանից եկող և միւսը Ախալքալաքից։ Ախալցխան էլ ունի իւր «եւրոպական ու ասիական» թաղերը, այսինքն հին բերդի թաղն իւր Հրէաստանով և կաթոլիկներով ու նորը։ Այս քաղաքն եթէ պատերազմի ժամանակ և այն էլ սահմանակից լինելով հանդերձ՝ կևանք չ'ունենար, էլ ինչ կարելի է սպասել այժմ. մի մարած և խղճուկ վիճակ։ Այնուամենայնիւ ժողովուրդն աչքաբաց է, ունի քաղաքային վարչութիւն, բաւականին լաւ ուսումնարանական շէնքեր, եկեղեցիներ և այլն։ Ամենահետաքրքիրն է այս քաղաքի հայերի արհեստագիտական ճաշակն ու հմտութիւնները, որ 'ի բնէ հռչակւած են։

Այս անգամ իմ ուշադրութիւնը գրաւեցին պ. պ. Զիֆտալարեան եղբայրները, որոնք հասարակ միջոցներով և առանց մեքենաների չինում են ամենապատուական եւրոպական զէնքեր։ Այնքան մաքուր և ընտիր ձեռակերտից են և միևնոյն ժամանակ անհամեմատ դիմացկուն, որ գործարանից հանած ապրանքից անհամեմատ աւելի արժէք ունին։ Այս հասարակ արհեստաւորների հնարագիտութիւնն ու տոկունութիւնը զարմանալի է։ (Մոռացայ ասել, որ այժմ Թիֆլիսում կան նոյնպէս երկու դինագործ կրթեալ երիտասարդներ, Գէորգեան ճեմարանի նախկին աշակերտներ, որոնք Ռուսաստանումն են սովորել մեքենաներով գործել և այժմ Կովկասում իրանց տեսակում առաջին և միակն են)։ Յետոյ ես այցելեցի իմ համաքաղաքացի պ. Արշակ Կարապետեանցի կտորեղէնների գործարանը։ Այս երիտասարդն եղել էր Ախալցխայի գժտութիւնների ժամանակ ուսուցիչ և զրկւելով իւր պաշտօնից՝ ինչպէս շատերն հեռացել էր այդ ասպարիզից։ Նա իւր խելքն ու միտքը տւել էր բրդեալ կտորեղէններ գործելուն, հնարել ու կազմակերպել էր մանելու և գործելու մեքենաներ, հաւաքել էր մի քանի օրիորդ ու կին գործաւորներ ու մի պատուական գործ էր բացել։ Կտորների օրինակները տեսայ, որոնք բաւականին ընտիր էին և իրանց գործւածքով ու տեսքով նմանեցրած էին եւրոպականին։ Ափսոս որ ախալցխացիք, թէև խօստացել էին աջակցել ընկերութիւն կազմելով, սակայն դեռ այս մարդը մեն մենակ գործելով՝ մինչև անդամ լաւ բուրդ առնելու միջոց չունէր։ Ես խորհուրդ տւի այս ժրաջան երիտասարդին մեր հայրենի Ալէքսանդրապոլ քաղաքը վերադառնալ, ուր աւելի հեշտութեամբ կարող էր ընկերութիւն կազմել։ Եթէ նիւթական միջոցներ լինէին, այս գործը կարող էր հեշտութեամբ մրցել գործարանական ապրանքի հետ, վասն զի այն ժամանակը, որ շահում է մեքենան, աշխատանքի բացակայութիւնից մանաւանդ այդպիսի քաղաքներում կարելի էր

շատ արժան գնել։ Վերջին ժամանակներս դորդաղործութիւնը նոյնպէս բաւականին առաջ գնաց այս քաղաքում, սակայն ախալցխացի կանայք իրանց կիրթ ճաշակով, հայկական տարազով՝ հանդերձի և արդ ու զարդի ձևակերպութեան վերայ առանձին լեմն ազդեցութիւն ունին։ Ախալցխան «մոդայի» կենտրոն է համարւում Ախալքալաքի, Արդահանի, Կարսի և Ալէքսանդրապոլի համար։

Ախալցխայից Ախալքալաք գնալու համար մենք մտնում ենք վերուվիշնայ գետի գեղեցիկ ձորը, որ լի է բաղմաթիւ այգիներով ու կաղմակերպված բարձր ապառաժներով։ 8—9 ժամ լետոյ հասնում ենք Ախալքալաք, նոր քաղաքը, որ Զմիւռնիայի հայնոցի չափ է։ Փողոցներն ու շէնքերը կանոնաւոր են, երեք կողմից շրջապատած է ձորերով, որոնց մէջ դնետեր են հոսում դէպի Ախալցխա։ Դիրքը բարձր է և ունի մի թեթև, ջինջ ու անմահական օդ։ Այս քաղաքում արժէ միայն ամարային երեք ամիսները մնալ, դի ձմեռը շատ ցուրտ է և սաստիկ քամիներ ունի։ Այս փոքրիկ անկիւնը սիրելի պէտք է լինի իւրաքանչիւր հայ ճանապարհորդի, որ աշխարհի երեսին շատ մեծ ու փոքր քաղաքներ տեսնելով՝ դուռ հայկական ընտանիքի անարատ կեանքի մէջ է ընկնում։ Այս կողմից սիրելի է նաև Ախալցխան, սակայն Ալէքսանդրապոլը մի քիչ փոխված ենք տեսնում. կան այնտեղ ընտանիքներ, որոնք ոչ իրանց պապերի կեանքն են վարում և ոչ էլ գիտեն թէ ինչպէս պէտք է դաստիարակեն իրանց զաւակներին, եթէ ուզում են ճշմարիտ եւրոպացի դառնալ։

Այս խեղճ Ախալքալաքն իւր բաղմաթիւ գիւղօրայքով 4—5 տարի է տնտեսական մեծ տագնապի մէջ է։ Այն հայ գիւղացիները, որոնք մի քանի տարի առաջ պակասութիւն էին համարում հաւ, սեր ու մածուն և այլն չուկայ բերել ու վաճառել, այժմ, շնորհիւ տեղական երաշտութիւնների և ցրտերի՝ անով տեղով մնանկացել են և իրանց կանանց կոկիկ ու հարուստ արդ ու զարդը քաղաքում վաչխառուների մօտ գրաւ դրել ամենածանր պայմաններով։ Տասնեակ աջողակ տարիներ են հարկաւոր, որպէս զի այս գիւղերի խելքերը գլուխները գան։

Ախալքալաքում կայ մի փոքրիկ զարգացած երիտասարդական խումբ, որ այս քաղաքի թարմ ոգւով գործող առաջին սերունդն է։ Սրանց գործունէութեան քսանամեակը մօտենում է, որ լիշատակութեան արժանի է, որովհետև իրանց աղքատիկ քաղաքում, ամենասուղ միջոցներով պահել են երկսեռ վարժարաններ, ընթերցարան և թատերական բեմ։ Այս Կովկասեան այն գողտրիկ բեմերից մինն է, որի վերայ հայ համնատ կինն ու օրիորդը երբեմն ասիական և երբեմն եւրոպական տարազի զգեստներով թատերասէր հասարակութեան առաջ են ելնում՝ աղգային ու համամարդկային արժանաւորութիւններն ու պակասութիւններն ներկայացնելու։

Մեր հրաժեշտը տալով սիրելի Ախալքալաքին՝ դուրս ենք գալիս նորա ընդարձակ դաշտավայրը, որ անձրևային տարիներում բիւրաւոր մար-

դիկ է կերակրում։ Մի երկու ժամ լեռով հասնում ենք «դուխաբորներ»-ի, ռուս աղանդաւորների գիւղերը, որոնց կեանքը մեր հայ նահապետական գիւղերի հակապատկերն է։ Դուխաբորներն իրանց առաջնին արհեստներով, խնայողութեամբ, համայնական ընտիր կեանքով, ժուժկալութեամբ և չրջահայեցողութեամբ շատ բարձր են մեր հայ գիւղացիներից։ Հայ գիւղերը սնանկացան և դուխաբորների պարտապան-մշակները դառան։ Կարծեաք ասում էին, որ լաւ էլ տոկոս են առնում։ Բազմաթիւ հայ գիւղացիներ, դուխաբորների վարուցանքն են անում, որոնք այնքան գլուխ չ'ունենալով հողի մշակութեան համար՝ նախադասում են կառապանութիւնը՝ քաղաքից քաղաք չրջելը։ Սա մի անգամ լիշեցի, որ այս աղանդաւորները վերջին տարիներն, երբ իրանց նահապետի վերջին շառաւիղը, դուստրը, մեռաւ, սորա հարստութեան և իշխանութեան ժառանգութեան մասին մեծ գժտութիւնների մէջ ընկան և այժմ վերին աստիճանի դրգռուած են երկու կուսակցութիւնները։ Մինչդեռ առաջ մեծ ու փոքր կար, սէր ու պատկառանք կար, երբ միմեանց հանդիպում էին ծանօթ թէ անծանօթ՝ սիրալիր բարև էին տալիս, այժմ միմիայն խոժոռ դէմքով ու լաճախ հայհոյանքով են միմեանց կողքից անցնում։ Մեր հայերն այսքան տարիներ սրանց դրացութիւնից չատ աննչան մտաւոր ու բարոյական օգուտներ քաղեցին, իսկ դուխաբորները, չ'ունենալով եկեղեցի և ուսումնարան՝ միայն ընտանեկան նահապետական կեանքի վերայ գնալով՝ աւելի լետագիմեցին քան լառաջադիմեցին։ Սա մի հետաքրքրաշարժ քաղաքակրթական երևոյթ է։

Դուխաբորների գիւղերից երկու ժամ լեռով հասնում ենք պատմական Ախուրեանի ակունքներին, այն վճիտ ու սիրուն վտակներին, ու առուակներին, որոնք հետզհետէ միանալով՝ դէպի Ալէքսանդրապոլ և ապա Անի քաղաքն են չտապելու։ Մի քանի ժամ մենք անցնում ենք բարձր բլուրների վերայից և իջնում խոր հովիտներ ու ձորեր և վերջապէս մեր առաջ բացւում է Ալէքսանդրապոլի լայնածաւալ դաշտավայրը, որի սահմանները միայն բարձրաբերձ լեռնաշրջաններն են կտրում։ Մի ընդարձակ և պատկառելի չրջան է, մի հայկական հմայական «կլոր» պար է այս, որի մէջ երկու զոյգ հարս ու փեսայ, իրանց «ոսկէ հարսանիքի» տարեդարձի ուրախութիւնն են անում իրանց աղուորիկ ու խորոտիկ դստերց և տղաների հետ։ Մասիս ու Արագածն են այդ ալեզարդ պատկառելի ծերունիները, որ նայում են իրանց բազմադարեան հնութիւնից։

Ալէքսանդրապոլը նոր քաղաք է. շինել է Ալէքսանդր Ա. կայսեր օրով և նորա անունով էլ կոչւել է։ Առաջ Կիւմրի (Կումայրի) էր կոչւում, որ մի հասարակ գիւղ էր և որի չինական հասարակութիւնը քաղաքի հիւսիսային կողմը տակաւին կայ և քաղաքի նիւթաւորապէս ուժեղ տարրերից մէկն է կազմում։ Այս դասի հետ կարող է մրցել միայն առևտրականը։ Ալէքսանդրապոլի բնակիչները բաղկացած են մասամբ կարնեցիներից

(Ախալցխան ու Ախալքալաքը գլխաւորապէս այս տարրերից են բաղկացած նաև իրանց գիւղերով), ապա բաղաքացիներից և գլխաւորապէս Կարսի գաղթականներից։ Այս երեք քաղաքների բարբառներն էլ համարեա իսկութեամբ խօսում է իւրաքանչիւրն իւր ընտանիքում, սակայն ընթացիկ և տիրող բարբառը կարսինն է։ Ալէքսանդրապոլն այժմ 30,000 բնակիչ ունի, որ անհամեմատ շատ կը լինէր, եթէ պատերազմից յետոյ ամայացած Կարսը չընդլայնուէր։ Բնակիչները գլխաւորապէս հայերն են, ուրեմն հայկական քաղաք է. կան սակաւաթիւ յոյներ ու թուրքեր, որոնք հայերի հետ խօսում են հայերէն, իսկ միմեանց հետ թէ մայրենի և թէ հայերէն։ Չորրորդ տեղը բռնում են ռուսները, որոնք գլխաւորապէս զինուորական ու քաղաքական պաշտօնեաներ են, հաստատ բնակութիւն ունին ծեր զինուորներն ու պաշտօնեաները, որոնք այլ ևս չեն ուղեցել Ռուսաստան վերադառնալ։ Այս քաղաքում ծնուած ռուսները, որոնք մանկական հասակում ունեցել են հայ խաղակիցներ, խօսում են և հայերէն։ Այստեղ ռուսերէնն այն դերն է կատարում, ինչ Տաճկաստանի սալոններում գաղիերէնը, ուրեմն «մոդայի» լեզու է և օրիորդներն արդէն կոտրատում են...։ Ուղիղ խօսող քիչ կայ Ալէքսանդրապոլում, իսկ ինչ վերաբերում է արտասանութեանը՝ ինչպէս նաև Թիֆլիսինը, «Կովկասեան ռուսերէն» է։ Ով ռուսերէն կոտրատել գիտէ, նա ի հարկէ պէտք է նաև վէպեր կարդայ։ Մի հետաքրքրաշարժ քաղաքակրթական-պատմական երևոյթ է այս. ինչպէս որ մանուկներն ընթերցանութիւն սովորելով յավիտակութեամբ կարդում են հեքիաթ և դիւցազներգութիւն, այնպէս մանկական զարգացման մէջ գտնուող երիտասարդութեան միակ ու սիրելի նիւթն է վիպասանութիւնը, որ աւելի օրիորդների մէջ է զգալի։ Երբ ծնողներն իրանք տգէտ են, ի հարկէ, նրանից բան սպասելն աւելորդ է. բայց ուսումնարանները կոչուած են լոյս տարածելու. նրանք պէտք է ընթերցանութեան համար ազնիւ ու կիրթ ճաշակ զարգացրած լինէն և միայն դասերը սերտել տալով չը բաւականանային։ Այսպիսի օրիորդները «վերևից» են նայում իրանց պէս չը կարդացող երիտասարդների վերայ...։

Ալէքսանդրապոլն երբեմն լայնի էր իբրև մի եռանդուն քաղաք, վերջին 5—6 տարիները նա մի տեսակ թմրութեան մէջ ընկաւ։ Օտարաքաղաքացի ուսուցչական խումբը ցրուեց, նորա տեղը բռնեց տեղականը, որ հայրենիքում շատ արժան գնահատուեց։ Հարուստ և լուրջ մարդիկ հայկական դպրոցներում այլ ևս զաւակներ չ'ունենալով՝ հեռացան հոգաբարձական ասպարիզից։ Հոգաբարձութիւնը, որ առաջ մի պատուաւոր կոչում էր, այժմ նաև այն երիտասարդ տարրից զրկուեց, որ անձնուիրաբար գործում էր։ Գնահատութիւն չկար։

Այս տարի հանդամանքները փոխուել են։ Միևնոյն ժամանակ եկել է մի արժանաւոր յաջորդ հայր Գ. Սաթունեանցը, որ ձգտում է վերջ տալ այն կուսակցական ոգուն, որ շատ բան քանդեց։ Այժմ այդ հնարաւոր է

և մենք պէտք է սպասենք, որ լաջողի այդ կարևոր դիտաւորութիւնը, որ ցարդ ոչ մէկին չը վիճակուեց։ Ալէքսանդրապոլում լաւ մասաւոր և բարոյական ոյժեր կան, նորա ժողովուրդը արթուն և ընդունակ է, պէտք է միայն նորա ոյժերի գործադրութեան եղանակն իմանալ։ Այս քաղաքի հայերը վաղ ժամանակներից հետևել են բարձրագոյն կրթութեան, ունին բաւականին համալսարանականներ, որոնց շատերն հասարակական և գրականական ասպարէզներում կարևոր դեր են խաղում՝ միայն ոչ իրանց քաղաքում։ Այլ և այլ պատճառներէն հարկադրուած՝ համալսարանականների այդ խումբն այսօր ցրուած է հեռաւոր քաղաքներ և իրանցից ոչ մի ներկայացուցիչ չունին քաղաքում։ Այս տարի պր. Պ. Զիթողցեանը միակ մարդն էր, որ վերադառնալով բելգիական Լիեժ քաղաքի արուեստանոցից՝ զարեջրի կանոնաւոր գործարանի էր ձեռնարկել իւր հայրենի քաղաքում։ Միւս տարի կրտսեր եղբայրն էլ է աւարտելու։ Երկուսը միասին նաև այլ գործարաններ հիմնելու դիտաւորութիւն ունին։ Մեր երկրում հում նիւթերն ու մանաւանդ աշխատանքը շատ արժան է. այս տարի էլ պատահմամբ բացուել են քաղաքի շրջակայքում քարածուխի ահագին լեռնաշղթաներ, որ առանձին կեանք պէտք է նուիրեն Շիրակին։ Ալէքսադրապոլն իւր շրջակայ բաղմաթիւ հայ գիւղերով բացառապէս ապրում է ցորենի և գարու բերքերով. երբ երաշտութ է, հաղիւ է շունչ առնում։

Այս անդամ Ալէքսանդրապոլում մեծ շարժում կար, օծւում էր Աստուածածնայ վերաշինած եկեղեցին և մի զարգացած երիտասարդ պ. Մելեան՝ քահանայ էր ձեռնադրւում։ Մենք թէև անծանօթ մնացինք այս մեր ներկայ թեմական տեսչին, սակայն, ինչպէս պատմում էին, գործունեայ և զարգացած ուսուցիչներից մէկն էր Սրևանի թեմական դպրոցի. ուստի մեր ուսումնարանները վերջին տարիները իսպառ զրկուած լինելով թեմական տեսչից՝ այս դէպքը կարող էր միայն ուրախալի լինել։ Միևնոյն ժամանակ ես չէի կարող շատ ոգևորուել նոր եկեղեցու մեծածախք շինութեամբ՝ չը նայելով որ Սրբազան քարոզիչ Պարղեանը տհաճութեամբ խօսեց այն թղթակիցների մասին, որոնք այս տնտեսական տաղնապի ժամանակ աւելորդ էին համարել այս չէնքը. քանի որ մի քանի քայլափոխ հեռաւորութեան վերայ 3 ահագին եկեղեցիներ ունինք, որոնք բաւական զատարկ են մնում։ Ըստ իս մի փոքրիկ մատուռ կ'բաւէր Աստուծոյ պատկերի համար, իսկ մնացած գումարը պէտք էր երկսեռ վարժարանաց շինութեան սեպհականացնել, որոնցից երկուսը մեծ վտանգի մէջ են։